Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԵՌ
665

ՀԱՍՏԱՏՈՍ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ՓՈԽԵՐԷՆ

Ի նոյնախաւոյն, շարադրեալ ՝ի Հայր Համազասպայ Թորգոմեանց Աստիճանաւոր յաշխարհիկ լեզու Հայոց Տաճկաստանի, և տպագրեալ ՝ի Վենետիկ 1848 ամի։

Յաշխարհիկ լեզու Հայոց Ռուսաստանի ՝ի Վարժապետ Խրայելէ Տէր Գրիգորեան Սամիրոնեանց Շուշեցւոյ.

ՇՈՒՇԻ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՅԳԵՏԵՅԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԳԱՐԱՊԵՏԻՆ ՀԱՅՈՑ։

1866։

Բայց ինձ տացէ Աստուած ասել ըստ միտս,
և խորհել արժանաւոր ըստ բանից աստուծոյ։

(Ա. Կորնթ. ԺԲ. 9։ Հռոմաստ. Է. 15։)

Ընթերցեալ մեր զայս պատմութիւն Հայոց, և գտեալ զայն ըստ ամենայնի յարմար և պիտանի Դպրոցական աշակերտաց, վասն որոյ հրամայեցաք տպագրել, վաւերացուցեալ զայս դրոշմամբ կնքոյ մերոյ։
Ալինաքսանդր Աստուածատուր Դպրապետ Հայոց
Սարգիս Էր Նարիսեան Հ. Գալուստեանց։

29 664

4 665-60

ՀՈՐԻՆ ՌԵՐՔՐ ՍՐՈՒԱՉՆՈՒԹԵՆԷՆ

ՎԻՇԱԿԱՒՈՐ ԱՌԱՔՉՆՈՐԴԻՆ

ԳԼԽԱՒՈՐ ՏԵՍՈՒՆ

ՍԱՐԳԻՍ ՍՐՔ-ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՀԱՍԱՆ ՋԱԼԱԼԵԱՆՑ ԵՒ ԱՍՊԵՏԻ



ԸՆԹԵՐՑԱԿԱՆ ՀՈՎՈՒՄՆԵՐ

ԵՒ ԲԱՐԵՊԱՐՏ ՏԷՐ.

Հայ տարրուց դէպը փորձ առինք մեք մեր ուսուցչութեան ժամանակները դասատուութեամբ ազգային պատմութիւնը հայոյ մատաղուներոյն զանազան դրքերի վերայ, որ ըստ դիւրընկալ ճաշակաց քնքշասիրտ մանկտւոյն յօրինած չլինելոյն համար՝ միշտ դժուարանում էին իւրեանք, և կրկնապատկում մեր ժամանակների աշխատութիւնը այս մասին, համառօտելոյն համար ընդարձակագոյնը զանազան դասատետրակների վերայ։ Բայց չէին գտնում գոնեա՝ հեշտընկալ ոճով յօրինեալ դասագրքեր, ըստ որոց գուցէ կարողանար ուսուցիչը թեթեւացնել իւր

պաժանակիր աշխատութիւնը, և այնպէս հեշտութեամբ ուսուցանել աշակերտաց ազգի պատմութիւնը։ Ուստի յետ ժամանակաց անկանելով մեր ձեռքը համառօտ պատմութիւնը այոց, յօրինածը ։ ամագասպայ Թովրճիմանեան Մխիթարեանց, և տպագրածը Վենետիկ 1848 թուականին, որ բաժանված է երկու հատոր, մէկը արց Պատասխանի դպրոցաց մատաղահաս տղայոց համար համառօտիւ։ իսկ միւսը փոքր ինչ ընդարձակագոյն հանդերձ կարևոր խորհրդածութեամբք զարդացելոց համար։ Բայց այս պատուական գրքոյկը շարադրած լինելով Տաճկաստանի աշխարհիկ ոճով դժուարընկալ է մանկանց, և գրեթէ 'ի տեղիս տեղիս անհասկանալի։ Վասն այսորիկ մեք՝ սիրով ղիւրագոյն յառաջադիմութեան մատաղերամ մանկտւոյն ազգիս, աշխատութիւն յանձն առնելով փոխեցինք այժմ առաջին մասը գրոյն է տեղական աշխարհիկ բարբառ մերս այոց,

գնելով իւր պատշաճ տեղը ամբողջ օրինակ-
ները զրուխթեանց Աբգար թագաւորին առ
Տէրն մեր Յիսուս, և պատասխանագրու Ն
Տ՚ն առ Աբգար։ Եւ՚ այ՚և օրինակները զրու-
խթեանց Աբգարու առ Տիբերիոս Կայսրն Հռ-
ովմայեցւոց, և սորա առ Աբգար։ Եւ
գաբձեալ Աբգարու առ նա։ Նոյնպէս և
թղթոցն Աբգարու առ Սերսէհ արքայն
Ասորեստանեայց՝ որդին Սրուաշիսի Պարսից
արքայի՝ ի Բաբելոն։ և առ Սրուաշէս ար-
արքայն Պարսից։ (Այս օրինակները հա-
նեալ են մատենից լեակատար վարք և վը-
կայաբանութիւն սրբոց, տպագրելոյն՝ ի Վե-
նետիկ յամի Տեառն 1810։ երես 983—984)։
Երկրորդ հատորը այս պատմութեան ինչ
պլուսմ ցարմար ժամանակի։

Ո՛ Բարերար Տէր՝ թէև միով կողմով
գիւրընկալ է եղել այս գիրքը քստ տեղա-
կան բարբառոյն, բայց միւսով ծանրութիւն

ի լինում դեռ աշակերտաց ընդօրինակելոյ համար տետրակներից, և մանաւանդ թէ՝ օրինակաձներն կարի սխալ և աղաւաղ են լինում։ Ուստի ուզելով մեր այս մասին ևս հեշտութիւն տալ աշակերտաց, վասն որոյ տրա հետ առաջարկելով Ձեր Բարձր Սբրբազնութեանը իմ այս դուղնաքնայ աշխատութիւնը, ամենախոնարհ դիմաք խնդրումեմ բարեհաճէք հրամայել տպադրելոյ մի ազգաւէր անձին ծախուք, որ այժմ ցանկանում ի՛ զձաթել իւր սեպհականութիւնից, որով և պարտաւոր կ'կացուցանէք իմ նուաստութիւնը ամենայն երախտապարտութեամբ, և միանգամայն յորդոր կ'լինիք՝ պարզ դրաբառ լեզուաւ ձեռնարկելոյ և երկրորդ մասին զրոյն 'ի պէտս դպրոցական աշակերտաց և յառաջադիմութեանց նոցա 'ի պարծանս ազգիս։

Պատիւ քնձ համարիմ կալ և մնալ

միշտ ամենայն հպատակութեամբ
Բարձր Սրբազան Հովուապետիդ
նուաստագոյն ծառայ
Վ. Իսրայէլ Տէր Գրիգորեան
Սամիկոնեանց։

ԴՈՐԻՆ ՄԵԾԱՊԱՏՈՒԹԵՍՆ

ԵՎԱՅ ԵՒՏԻՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵՍՆ

ԿԱՆԱՉԱՑԵՍՆՑ

ԱՆԴ ԲԱՐԵՐԱՐ ՏԷՐ.

Անհրաժեշտ պարտաւորութիւն է ամենայն ուժեք օգտաբեր լինել ազգի՝ եկեղեցւոյ և հայրենեաց ըստ իւրոյմանն կարի։ Այս սուրբ պարտուցս զգացմունք հարկադրեցին զիս փոխադրել 'ի տեղական աշխարհիկ բարբառ զայս դասատետրակ ազգային պատմութիւն 'ի պէտս Դպրոցական Հայոց մանկըտւոյն, որ թէև ոչքան տկար կարծեսցի, բայց այնքան առաւել օգտաւէտ և շահաբեր և միանգամայն յարմար քնքուշ սրտից նոցա 'ի ըստ կրզեան անդ 'ի մանկական հասակի, զորոյ և ո՛չ 'ի սակաւ ժամանակի առաք զփորձն յառուրս մերոց դասատուութեանց։

Ուստի քաջայոյս գոլով իմ 'ի վերայ մեծամեծ Բարերարութեանց Ձերոց, զի ունիք յարգել սիրողաբար զայս առաջնապտուղ երկանց իմոց, և տալ զայն ծախուք ձերովք 'ի տիպ մուծանել՝ անմահացուցանելով այնու զանուն Ձեր 'ի նշան ազգասիրութեանդ։

Ուրեմն բարեհաճեցարո՛ւք Վ. Ի՛Հ Բարերար ընդունել զայս նուէր Ձերով յատկական յօժարամտութեամբ, որով և պակիլ զցանկութիւն երախտապարտ ծառայի Ձերոյ

Իսրայէլ Տէր Պետրոսեան Սահակոնեանց։

ՀԱՐՑՄՈՒՆՔ

ՊԱՏԱՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԻՐԱՒԱՄԱՍԻԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ։

Դաս Ա.

Հայկէ սկսեալ մինչև Արամ։

Հ. Ո՞ր Հայոց ազգը ուստեղից է յառաջ եկած.

Պ. Հայ նահապետին Յաբեթի անունն որդուոյը։

Հ. Ո՞վ եղև մեր ազգին նահապետը.

Պ. Հայկ, որ Թորգոմայ որդին էր, Թորգոմն էլ Գամերին, Գամերն էլ Յաբեթին։

Հ. Ի՞նչպէս մեր ազգին նահապետ եղև Հայկ.

Պ. Իւր ազգատոհմին վերայ տէր և գլուխ լինելով, և զնոսա իւր անունով Հայք

անուանելով, որ մենք էլ նրանցից եմք յառաջ եկած։

Հ. Ինչ սկսաւ մեր ազգի Տէրութիւնը։

Պ. Ընդհանրապէս ըստ հեղինակից քիչ մի յետոյ։

Հ. Ի՞նչ կերպով սկսաւ Հայկ իւր Տէրութիւնը։

Պ. Նոյն որ Բաբելոն դնացող և աշտարակը շինող մարդկանց լեզուն խառնվեցան, և ազգերը պիտի ցրուէին, Բէլ ուզից ամենին վերայ բռնութեամբ իշխել ու տուտուծոյ նման պաշտուիլ։ Հայկ էլ այս բանիս չդիմացաւ, ու Հայաստան դարձաւ երեք հարիւր քաջ դղեամարդներով, որ էին իւր որդիքը, թոռունքը, և նրանց ընկերացած հաւատարիմ մարդիկ (2346)։

Հ. Բէլ երբ որ այս բանս լսեց ի՞նչ արաւ։

Պ. Պատրաստեցաւ պատերազմ ուղարկեց Հայկին, որ գայ հնազանդի իւրան, եթէ ոչ նրան տանով տեղով սուր կ'քաշէ։

Հ. Հայկ այս բանիս լսելով հնազանդեցաւ Բէլին։

Պ. Ոչ։ հապա իւր քաջ տղայքներովը, ձա-

ուանելովը, և ուրիշ հաւատարիմ մարդիկներովը Իսրայէլին անհամար բազմութեանը առաջը դուրս եկաւ, որ եկեղէին իւր վերայ։

Ի՞նչպէս պատերազմեցին Այկն և Իսրայէլ։

Ա. Ահա Այկ յաղթեց Իսրայէլին զօրացը, վերջը երբ որ Իսրայէլը յետ էր քաշուում քիչ զօրքով, Այկ խսկոյն վերայ վազեց զարկեց նեռովը, և այն տեղ սպանաց վեր քցեց զամբարտաւան հոկայն Ը՝սուծոյ և մարդկութեան թշնամին։

Այկ Իսրայէլն մարմինը ի՞նչ արաւ։

Բ. Զմեռեալ տալով տարաւ Այսատանի Արք ասուած եկեղեցը, և մի խուրթի վերայ թաղեց, ուղելով որ ամէնքն էլ տեսնեն և իմանան ամբարտաւան մարդի վիճակը, և իրան էլ աշխարհքիս աբած լաւութիւնը։

Այկ Իսրայէլը սպանելուց յետոյ ի՞նչ արաւ, և ո՞ւրչափ ապրեց։

Գ. Ուղելով իմացնել իւր արդարասէր և անաշխարհակալ հոգին։ Թշնամին հա-

լածելից յետոյ դարձաւ Հայաստան եկաւ· քաղաքներ շինեց և բարեկարգութիւններ արաւ։ և 400 տարուայ չափ ապրելից յետոյ խաղաղութեամբ մեռաւ (2265)։

Հ. Ի՞նչ բնութիւն և ի՞նչ ձիրք կամ շնորհք ունէր Հայկ·

Պ. Արութով քաջ մարդ էր, մեծահասակ և դեղեցիկ, դուռուշ մազերով, կարմիր երեսով, վառվռուն աչքերով, ճերքով էլ շատ աջողակ և արագաշարժ· իսկ մտօք բարակամիտ, հնարագէտ, աշխարհաշէն և սրտով էլ անվախ։

Հ. Հայկին ժամանակը ի՞նչ մասնաւոր բան պատահեց Հայաստանի մէջ։

Պ. Ոչ 950 տարեկան վախճանվեց և թաղվեց ինչպէս կ'ասուի Նախջևան քաղաքումը· նոյնպէս Նոյեմզարա· Նոյի կինն էլ թաղվեց Արարատ Դաւառումը։

Հ. Հայկի տեղը ո՞վ անցկացաւ.

Պ. Ամենակ։

Հ. Ո՞վ էր Ամենակ.

Պ։ Հայկի քաջ և հայրենասէր անդրանիկ

որդին էր, որ նորա տեղը յաջորդեց։

Հ։ Երմենակ ի՞նչ գործ արաւ իւր հայրենասիրութեանը վայելուչ։

Պ։ Իւր Խոռ և Սանասարաշ եղբարքը Հարք Գաւառումը թողեց և ինքը արևելեան կողմերը գնաց, այն տեղերն էլ շէն արաւ։

Հ։ Երմենակին միւս եղբարքը ի՞նչ էլան։

Պ։ Երկու եղբարքն էլ այնպէս բարգմացան, որ հազարաւոր տարի ցեղերնին դիմացաւ իւրեանց անունովը Խոռխոռունիք և Սանասարեանք ասուելով։ Նոյնպէս Երմենակի Բազ անուն որդւոյն ցեղն էլ իւր անունովը Բզնունիք ասուեց։

Հ։ Երմենակին ո՞վ յաջորդեց։

Պ։ Երամայիս իւր որդին, որ Երմաւիր քաղաքը շինեց Նրասխ գետին մօտ (1975)։

Հ։ Ո՞վ էր Հայրայ և վերան ի՞նչ դիտելիք կայ։

Պ։ Հայրայ Երմայիսի որդւոց մէկն էր, որ շատ ուտելամել կ'սիրէր, այլն էլ նրան մի բարեբեր երկիր յուղարկեց, որ իւր անու-

նովը Հիրակ ասուեց։

Հ. Ասմայիսին տեղն ո՞վ անցաւ։

Պ. Ամասիա իւր որդին, որ իւր անունովը Ասիս անուանեց Ասրարատ սարը։

Հ. Ամասիայէ որդւոց վերայ ի՞նչ գիտելիք կայ.

Պ. Ամասիա երիք տղայ ունէր Փառոս, Յունակ և Գեղամ, առաջի երկուսի համար մի մի քաղաք շինեց, որ նրանց անունովը Փառասոս և Յունակիա ասուեցին, իսկ երրորդը Գեղամ իւր տեղը յաջորդեց։

Հ. Գեղամայ վերայ ի՞նչ է պատմւում.

Պ. Գեղամ մի տարի իշխելից յետոյ, յանձնեց տէրութիւնը իւր Հարմայ տղային, և ինքը Սևան ծովին եզերքներումը բնակվելով այն տեղը իւր անունովը կոչեց Գեղարքունիք կամ Գեղամայ արքունիք, և ծովն էլ Գեղամայ ծով։

Հ. Սիսակ անուն Գեղամայ որդւոյն վերայ ի՞նչ գիտելիք կայ.

Պ. Սիսակ իւր քաղաքը նայուածքին և խոտ-

ուսածքին համար Աղու կոչվեց. որքան բնակած տեղին անունը Սիսական առուեց կամ Սունիք. իսկ իւրյան տիրած օտար երկիրքերը Աղուանք։

Հ. Ով էր Հայոց և վերայ ի՞նչ մի մասնաւոր գործ է պատմվում.

Պ. Գնդամայ որդին էր. Սրա ժամանակը սկսեցին թշնամիք Հայաստանի վերայ վազել և տիրել, որ նրանք Հայի և նրա որդուցը քաջութեան գործքերը լսելով առաջ վախեցել և թուլացել էին. բայց ժամանակ անցնելով մոռացվել էր այս իրաւացի վախը մինչև որ Աբրամ Ի նորոյ վախ քցեց նրանց։

— ⁂ —

ԳԼՈՒԽ Բ.

Աբրամից մինչև Պարոյր։

Հ. Ով էր Աբրամ.

Պ. Հայոցի որդին և յաջորդը։

Հ. Աբրամին առաջին թշնամին ո՞վ եղավ.

Պ. Սիւքար Մարաց իշխանը, որ նրան առաջը գնալով Ասրամ յիսուն հազար զօրքով, յաղթեց և նրան բռնեց մի աշտարակի ծայրից գամեց (մամառեց) (1828)։

Հ. Հայոց երկրորդ թշնամին ո՞վ էր։

Պ. Խարշամ Խաբելացւոց իշխանը, որ նոյնպէս յաղթուելով սպանուեց Ասրամից։

Հ. Հայոց երրորդ թշնամին ո՞վ էր։

Պ. Պայապիս Կապառովկիոյ իշխանը, որ յաղթուելով փախաւ Միջերկրական ծովի կղզիներից մէկը։

Հ. Ասրամ Պայապիսին երկիրները ի՞նչ արաւ։

Պ. Ռոլորին էլ տիրելով Մշակ անունով մի իշխան դրաւ այն տեղ, և պատուիրեց որ ամէնքն էլ հայերէն խօսին։ որով այն տեղին անունն էլ փոքր Հայք ասուեց։ Մշակայ բնակած տեղն էլ Մաժակ, որ է Պայսերի քաղաքը (Սեսարիա)։

Հ. Ասրամայ վերայ ուրիշ ի՞նչ գիտելու բան կայ։

Պ. Աստիսանցւոց Սինոս թագաւորին մի մարգարտազարդ պսակ ընդունից և նորա երկրորդը կոչվից։

Հ. Ի՞նչ պատճառաւ Սինոս այս թագը ուղարկից.

Պ. Այն դի Աբրամին քաջութիւններին վախելով ուղից նորա բարեկամութիւնը ստանալ։

Հ. Աբրամ ո՞րչափ ժամանակ իշխից և ե՞րբ մեռաւ.

Պ. Յիսուն ութ տարի իշխից և մեռանելով իւրան յաջորդ թողից Աբրայ որդին։

Հ. Աբրայ ի՞նչու համար պատերազմի դուրս եկաւ Համիրամայ ընդդէմ։

Պ. Աբրայ շատ գեղեցիկ լինելով Աստիսանցւոց ախտամոլ թագուհի Համիրամը ուզից հետը կարդուել. բայց Աբրայ յանձն չառաւ և պատերազմի դուրս եկաւ։

Հ. Պատերազմին վերջը ի՞նչպէս էլաւ.

Պ. Աբրայ քաջութեամբ կռուից, բայց պատերազմին տաքացած ժամանակը զարկուից

ու մեռաւ. թէպէտև Շամիրամ պատուիրել էր իւր զօրացը որ նրան չտանեն ողջ բռնեն (1769)։

Հ. Շամիրամ ի՞նչ արաւ Հայաստանի մէջ.

Պ. Հաւանելով մեր աշխարհի ղէոցը և օրէնք դնելցիկութեանը, մի ամուր քաղաք և բնրդ շինել տուաւ Շամիրամակերտ անունով, որ յետոյ Պ՝ան էլ տուաւ։ և մինչև հիմայ մնացած են այն ժամանակուան շինած պատերը։

Հ. Ընդի ո՞վ յաջորդեց.

Պ. Շամիրամ Հայոց վերայ իշխան դրաւ Ընդի Կարդոս որդին։

Հ. Շամիրամ և. Կարդոս ի՞նչպէս մեռան։

Պ. Շամիրամ և Կարդոս Սինուայոյ վերայ պատերազմի դուրս եկին, որ Շամիրամայ որդին էր, և իւրանից ապստամբած. բայց յաղթուելով երկուքն էլ մեռան։

Հ. Կարդոսին ո՞վ յաջորդեց.

Պ. Ընուշաւան իւր որդին, որ թէպէտև չե-

ին ընկած էր Սինուսայ ճանքը, բայց սիրելի լինելով նրան, ազատվեց գերութիւնից, և եկաւ տիրեց իւր Հայրենեացը. երկար ժամանակ իշխեց շատ խելքով և մեռաւ։

Հ. Ո՞վ էր Պարեան.

Պ. Հայկին միւս որդւոց ցեղերիցը յառաջ եկած մի քաջ մարդ էր, որ Ընուշաւանին տեղը Նահապետ եղև. որովհետև Ընուշաւան որդի չունէր (1662)։

Հ. Պարեանին վերայ ի՞նչ գիտելիք կայ. և նրան ո՞վ յաջորդեց.

Պ. Սա շատ քաջութիւններ ունի արած, նրան յաջորդեց Ընրակ։

Հ. Ընրակին ո՞վ յաջորդեց.

Պ։ Ղաւան, Ղաւանին յաջորդեց Փառնակ, Փառնակին Սուր։

Հ. Սուր նահապետին վերայ ի՞նչ գիտելիք կայ.

Պ. Սուր որ իւրան քաջութեանցը համար այս անունը ժառանգեց, շատ յաղթութիւններ արաւ ընդդէմ թշնամեաց։ Սու-

բա ժամանակը Բանանայիք Իսրայէլացիներից հալածուելով՝ ոմանք Այստան եկան, և նրանցից ձևացաւ Բանանիդեանց կամ Գնթունեաց նախարարութիւնը։

Հ. Սուրին ո՞վ յաջորդեց.

Պ. Մէկը մէկից յետոյ յաջորդեցին Աւանակ և Աշտակ, որ նրանց վերայ պատմութիւն չունիմք։

Հ. Այկակ Ա. նահապետը ի՞նչ քաջութեան գործեր ունի արած.

Պ. Ամենդէս Ասորոց թագաւորին յաղթեց. բայց նորա Բելիքոս յաջորդիցը յաղթվեց և մեռաւ (1369)։

Հ. Ո՞յք յաջորդեցին Այկակիցը յետոյ.

Պ. Երկու հարիւր տարուայ չափ միջոցի մէջ եշխեցին Այոց վերայ սորանք, Ամբակ Ա. Ասնակ, Շաւարշ Ա. Ներսէս, Աստամ, Կարբ, Գոռակ, Բրանդ, Ընձակ, Գոշակ և Օրդայ, որ նրանց վերայ մի գիտելիք չ'կայ։

Հ. Արմայրին վերայ ի՞նչ է պատմվում.

Պ. Տրոյացւոց օգնութեան դնաց և շատ քաջ ջութիւններ արաւ. բայց Ենէիէսի հետ պատերազմելով մեռաւ (1182),

Հ. Զարմայրիցը մինչև Հսկայ որդին ո՞րչափ նահապետներ նստան.

Պ. Դրեթէ չորս հարիւր տարուան միջոցի մէջ տասնի չափ նահապետ նստան, այլ նրանց վերայ մի տեղեկութիւն չունինք. և են սոքա, Շաւարշ Ի, Պերճ Ա, Ալբուն, Պերճ Ի, Ռազուկ, Հոյ, Յուսակ, Ամբակ Ի, Փառնաւազ Ա Փառնակ Ի, և Հսկայորդի։

ԴԱՍ Գ.

Պարոյրիցը մինչև Հայկազանց նահապետութեան կոչմանէը, և հոսանքից էշխանութեանը։

Հ. Ո՞վ էր Պարոյր.

Պ. Հսկայորդւոյն որդին էր, որ Հայոց առաջին թագաւորը եղև։

Հ. Ի՞նչ պատճառաւ թագաւոր պսակվեց.

Պ. Յարքանաքաղ Ասորոց թագաւորին ընդդէմ օգնութիւն գնաց Պարակէս իշխանին ու միաբան յաղթեցին նրան, և ինքն էլ Պարակէսից թագ առաւ (746)։

Հ. Պարոյրին ժամանակը ուրիշ ի՞նչ գիտելու արժանի բան եղև.

Պ. Աղրամելիք և Սանասար Ասորեստանցոց թագաւորին տղայքը Հայաստան փախին, որ և վերջումը մեծամեծ նախարարութիւններ եղեն, այսինքն՝ Արծրունիք և Սանասուք կամ Սասնցիք։

Հ. Պարոյրիցը յետոյ ո՞յք թագաւորեցին.

Պ. Հարիւր տարուան չափ միջոցի մէջ հինգ թագաւոր նստեցան, որ նրանց վերայ մի յիշատակութիւն չունինք, սոքա են, Հրչեայ, Փառնաւազ Ռ, Պատճոյճ, Կոռնակ և Փաւոս։

Հ. Ռ. Հայկակին վերայ ի՞նչ գիտելիք կայ.

Պ. Նաբուզոդոնոսորին հետ Երուսաղէմի վերայ գնաց, ու այն տեղից Հայաստան բերաւ Թամիրաս անուանով մի իշխան, և

ելանէց սկսեցաւ Հաղբատունեաց ցեղը Հաղբատ կրնելի Իշխանին անունէցը առնելով. (605)։

Հ. Ո՞վ յաջորդեց Հայկակին.

Պ. Իւր որդի Յովհաննէ Ը. որ չորս տարի միայն թագաւորելով մեռաւ, վասն որոյ և սակաւակեաց ասուեց (565)։

Հ. Ո՞վ էր Տիգրան Ը.

Պ. Յովհաննէայ ազգն և Հայկազանց ամենէցը կրնելի թագաւորը։

Հ. Ի՞նչու համար Ը. Ժդահակ Սարաց թագաւորը Տիգրանին հետ թշնամացաւ։

Պ. Վասն զի Տիգրան բարեկամութիւն արաւ Կիւրոսի հետ, որ նորա թշնամին էր։

Հ. Ը. Ժդահակ ի՞նչ վարկեսութիւն բանեցրեց Տիգրանը մեռցնելոյ.

Պ. Տիգրանին Տիգրանուհի քոյրը իւրանկին առաւ, և նորա ձեռքովը ուզեց սպանել զՏիգրանը։

Հ. Ը. Ժդահակին չարութեան խորհուրդը առաց գնաց։

Պ. Ո՛չ. վասն զի Տիգրանուհին Ը. Ժդահակին

խորհուրդը ծածուկ իմացրուց իւր հղբօրը։

Հ. Որպանով Տիգրանուհոյն մի վնաս եղև.

Պ. Ոչ. որովհետև Տիգրան պատերազմը ուշացրուց, որ քոյրը ժամանակ գտնելով փախչի Ը.ժդահակին մօտից։

Հ. Պատերազմը ի՞նչպէս եղև.

Պ. Երբ որ Պիւրոս իւր զօրքովը եկաւ հասաւ, Տիգրան նորա հետ մէկ տեղ Ը.ժդահակին առաջը դուրս եկաւ, պատերազմին էն տաք միջոցը Տիգրան քաջութեամբ սպանեց զԸ.ժդահակը, որով պատերազմը վերջացաւ։

Հ. Տիգրան պատերազմից դառնալուց յետոյ ի՞նչ արաւ.

Պ. Ը.ժդահակին կինը, ընտանիքը և ուրիշ գերիները Հայաստանի մէջ բնակացրուց, և նրանցից սերեցան Պ. Հշապուհունք կամ Սուրբացան ասուած ցեղը։ Իսկ Տիգրանուհի քոյրը Տիգրանակերտի կողմերը բնակացրուց, որ նրանից սերեցաւ Պատան կամ Պատանիկ ասուած ազատ ցեղը։

Հ։ Տիզրան ի՞նչպէս թագաւորութիւն քըշեց։

Պ։ Շատ խելքով, շատ շինութիւններ արաւ և քառասունը հինգ տարի թագաւորելից յետոյ մեռաւ։ Իւրան տեղը յաջորդեց իւր որդի Վահագն։

Հ։ Վահագնին վերայ ի՞նչ բան է պատմըվում։

Պ։ Խիստ քաջ լինելուն համար՝ վերայ շատ առասպելներ խօսեցին, և Վրացիք նրան կ'պաշտէին։ Որա ցեղը Վահուանիք ասուեց (520)։

Հ։ Վահագնի ո՞վ յաջորդեց։

Պ։ Որդուց որդի յաջորդեցին Արաւան, Ներսէհ, Օարսհ, Արգամ, Հայգամ, Վան և Վահէ (351)։

Հ։ Ի՞նչու համար Աղէքսանդր (Մակեդոնացւոց թագաւորը) Վահէին վերայ եկաւ։

Պ։ Վան զի Տարսհ Պարսից թագաւորին օգնութիւն էր ուղարկել Վահէ։

Հ. Ի՞նչպէս մեռաւ Պ. ահէ.

Պ. Ընդ.քսանդրի ընդդէմ պատերազմելով շատ քաջութիւններ անելուց յետոյ պատերազմին մէջը ընկաւ մեռաւ, և տրանով Հայկազանց թագաւորութիւնը վերջացաւ 1800 տարի դիմանալից յետոյ (328)։

Հ. Պ. ահէից յետոյ Հայաստանի ո՞վ կիշխէր.

Պ. Մակեդոնացւոց կամ Ասորոց թագաւորները մէկ իշխան մի կ՚յուղարկէին որ Հայաստանը կառավարէ. այս իշխանները Պուսակալք են ասուում։

Հ. Ո՞վ եղեւ առաջին Պուսակալը,

Պ. Միհրան, որն որ Ընդ.քսանդրից յուղարկեցաւ, և հինգ տարի կենալուց յետոյ յետ կանչեցաւ (319)։

Հ. Միհրանին տեղը ո՞վ եղեւ Պուսակալ.

Պ. Եվդոսդոնէմէոս, որ Հայոց վերայ զհշաւաքք կնայէր, այն պատճառաւ շատ նեղութիւններ տուաւ Հայոց։

Հ. Ո՞վ արդեօք նրանց այս նեղութիւնից.

Պ. Ընդուարդ մեր քաջ նախարարը, որ Սիսոպտղէմիոսը փախցրեց Յայաստանից։

Հ. Ընդուարդ մինա՞կ իշխեց Հայոց վերայ։

Պ. Ոչ։ վասն զի Նումինէս Սակեղոնացի իշխանին միջնորդութեամբը 'ի նորոյ եկաւ Սիսոպտղէմիոսը և իբրև Ընդուարդին երկրորդ կ'կենար (317)։

Հ. Ընդուարդ ո՞րչափ ժամանակ իշխեց։

Պ. Ուրիշ շատ քաջութիւններ անելից յետոյ հաստատեցաւ իւր իշխանութեան մէջ, երեսուն երեք տարի իշխեց Յունոյ մեռաւ։

Հ. Ընդուարդին տեղը ո՞վ յաջորդեցաւ Սուսակալ։

Պ. Բրանդ։ սրա էլ յաջորդեց Ընդուարդ անունով մի իշխան, որ ապստամբելով Սելևկեացւոց (1) Անտիոքոս Գ։ թագաւորից՝ ինքնագլուխ իշխեց։

---

(1) Ասորիք, Սելևկեացիք էլ ասուեցին Իրանց առաջին թագաւոր Սելևկոսին անուամբը։

Հ. Յաջողեցան Երդաւաղին ապստամբութիւնը.

Պ. Վախենալով անտիոքոսիցը շատ ընծաներով խոստացաւ հարիը տալ, և նորանով 'ի Հռոմ Կուսակալ եղև։

Հ. Երտաւաղին տեղը ո՞վ դրուեց Կուսակալ.

Պ. Երտաշիսա և Զարհրատ Հայ իշխանները։

Հ. Զարհրատ և Երտաշիսա մինչև վերջը հաւատարիմ մնացի՞ն Սելևկիացւոց.

Պ. Ո՛չ. հապա Հռովմայեցւոց օգնութեամբը ապստամբվեցին, և երկուքն էլ թագաւորեցին։ Զարհրատ փոքր Հայոց վերայ, Երտաշիսա մեծ Հայոց վերայ. ուր որ Աննիբաղ Կարքեդոնացի մեծ զօրապետին խրատովը Երտաշատ քաղաքը չինեց.

Հ. Անտիոքոս Եպիփան երբ որ լսեց այս բանս ի՞նչ արաւ.

Պ. Երտաշիսային վերայ պատերազմի դուրս գալով բռնութեամբ հնազանդացրեց։

Ա. Ընտաշխատիցը և Հաղրատիցը վերջը ոչք իշխեցին Այոց.

Պ. Սորանց վերջը քանի մի թագաւորներ էլ նստեցին Այաստան մինչև Ընշակունեաց ժամանակը, բայց պատմութիւններին աղաւաղված լինելով մի բան չիմանվում նոցա վերայ։ Միայն թէ նոցա վերջի թագաւորը եղև Սորփիւղիկէս Հաղրատին տղան (159)։

ՍԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԿՈՒՆԻՆՑ

— ⊹⊹ —

ԳԼԽ Դ.

Ա. ՍԱՂԱՐՇԱԿԻՑ ՍԿՍԱԼ ՄԻՆՉԵՒ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ Ը.

Հ. Ո՞Վ էին Արշակունիք.

Պ. Պարթև ասուած ազգից էին, որ Նրուանցից Արշակ անունով մի քաջ մարդ թագաւոր եղև իւր ազգին, իւր թոռը Արշակ էլ շատ քաջ լինելով թագաւորութիւնը մեծացրեց Հայաստանին էլ տիրեց. և իւր եղբայր Ս. աղաթշակը այն տեղ թագաւոր դրաւ (149)։

Հ. Ս. աղաթշակ թագաւոր լինելից յետոյ ի՞նչ պատերազմ արաւ.

Պ. Սորփիւղիկէսին հետ պատերազմ անելով նրան սպանեց և այնպէս բոլոր Հայոց տէրեց։

Հ. Վաղարշակ ո՞ւր դրաւ իւր աթոռը։

Պ. Սՙբին քաղաքումը, որ Ասորոց երկրին և Այսատանին մէջ տեղերումն է։

Հ. Վաղարշակ Այքը սիրեց։

Պ. Տեսանելով նրանց քաջութիւնը և տիրասէրութիւնը այն ատենն սիրեց Այքին, որ հետևեց զիտել և իմանալ այնպիսի պատուական ազգին պատմութիւնը։

Հ. Որքան Վաղարշակ զաւա՞ռ ուզած պատմութիւնները։

Պ. Այսատանի մէջ չ'գտնելով, Մարքարս Պատինա անուանով մէկը յուզարկեց ՚Նինուէ, որ երթայ այն տեղ գրատան մէջից գտնէ Այոց պատմութիւնը, ինչպէս որ գտաւ էլ։

Հ. Վաղարշակ ուրիշ ի՞նչ բարեկարգութիւններ արաւ։

Պ. ՚Նախարարաց և Տէրունեաց մէջ շատ կարգեր դնելից յետոյ որոշեց նաև որ թագաւորին հետ միայն անդրանիկ որդին ճոյ, միւսները ուրիշ տեղ կենան։

Հ. Վաղարշակայ ո՞վ յաջորդեց.

Պ. Ընշակ Ա. իւր որդին, որ շատ բարեկարգութիւններ և քաջութիւններ արաւ (127).

Հ. Պ-լևաւոր քաջութիւնը ո՞րն է.

Պ. Պոնդացիներին նուաճեց և իւրան յաղթութեան նշան մի կոթող (քարէսիւն) անկեց ծովի եղերքումը, և նիզակով (ջուայ) զարկելով ծակեց քարը։

Հ. Ա. Ընշակին ո՞վ յաջորդեց.

Պ Իւր որդի Ընրտաշէս Ա. որ Յունաստանի և բոլոր փոքր Ասիոյ տիրեց։

Հ։ Ի՞նչ բան արաւ Պարսկաստանի մէջ.

Պ. Իւր անունով փող կտրել տուաւ. և Պարսից թագաւորը որ մինչև այն ժամանակը պատուով առաջին էր՝ իւրան երկրորդը շինեց։

Հ. Ընրտաշէսի զօրաց բազմութեանը վերայ ի՞նչ է պատմվում.

Պ. Կասեն թէ՝ երբ որ ամէնքը միաբան նեռները կարձակէին արևը կխափանէր, և եթէ որ մէկ մէկ քար կնքցէին բլուր կըձևանար։

Հ. Ի՞նչպէս մեռաւ Ասրտաշէս.

Պ. Զօրաց մէջ խռովութիւն ընկնելով նրան սպանեցին (87).

Հ. Ասրտաշեսին ո՞վ յաջորդեց.

Պ. Տիգրան իւր որդին, որ արդէն երկու տարուց աւելի հօրը հետ կ'թագաւորէր:

Հ. Ի՞նչ Տիգրանին առաջին գործքը ի՞նչ եղև.

Պ. Յոյները նուաճեց, որք Ասրտաշիսի մահը լսելով ապստամբել էին:

Հ. Տիգրան ո՞վ դրաւ իւրան փոխանորդ Պոնդոսի մէջ, և Հոյները նուաճող.

Պ. Իւր քրոջ Սիհրդատ անուանով մարդը, որ քաջ և խելօք էր:

Հ. Տիգրան ի՞նչ կրօնական գործոզութիւններ արաւ.

Պ. Ամենայն տեղեր մեհեաններ շինելով. Յունաստանից բերած չ'Աստուածների արձանները կանդնեցրեց և նրանց համար քուրմեր հաստատեց:

Հ. Ասորոց երկրումը ի՞նչ բան արաւ Տիգրան.

Պ. Ասորոց երկրին տիրեց և նրանց Սելևկեանց թագուհին բռնեց ապանեց, պատճառը որ Սելևկեացիներին յորդորել էր Տիգրանիցը ապստամբելու մասին.

Հ. Երէայք երբ որ լսեցին Սելևկեանց թագուհուն ապանվելը ի՞նչ արին.

Պ. Շատ ընծաներ տուին Տիգրանին, որ իրանց Աղեքսանդրա թագուհուն մի վնաս չհասցնէ.

Հ. Ի՞նչ պատճառաւ Հռովմայեցիք Միհրդատին հետ թշնամացին.

Պ. Պատճառ էր Միհրդատ Պապատովկիոյ իշխելով. իւր Արիարաթ տղան նրանց թագաւոր դրաւ. Պապատովկեացիք էլ դէպ 'ի Հռովմայեցիք դիմեցին:

Հ. Հռովմայեցիք էլ ի՞նչ արին.

Պ. Շուտով Սիդղա քաջ զօրապետը յուղարկեցին, որ եկաւ Արիարաթը և իւրան Գորդիաս զօրապետը փախցրեց, և Արիոբարզան Պապատովկացին թագաւորացրեց:

Հ. Մինչդեռ այն ժամանակը ի՞նչ արաւ.

Պ. Տիգրանից օգնութիւն առնելով վերըստին Հռովմայեցիները փախցրեց և Ասիայաթը թագաւոր դրաւ։

Հ. Հռովմայեցիք ի նորոյ զօրք յուղարկեցի՞ն Մինչդեռատին վերայ.

Պ. Այլևայլ զօրավարներ յուղարկեցին, որ նրանց շատ անգամ յաղթեց Մինչդեռատ և Ակիւղաս զօրավարին սպանեց. բերանը հալած ոսկի լցնելով։

Հ. Հռովմայեցիք ո՞վ յուղարկեցին զօրավար.

Պ. Ղուկուղղոսը, որ շատ անգամ կռուելով երբեմն յաղթվեց, երբեմն էլ յաղթեց Մինչդեռատին։

Հ. Ի՞նչու համար Տիգրան Մինչդեռատին վերայ բարկացաւ.

Պ. Այսն զի միանգամ չարաչար յաղթվելով Ղուկուղղոսից փախաւ Տիգրանին մօտ, և Ղուկուղղոսը շատ տեղերու տէրեց. բայց վերջուն ի նորոյ հաշտվեց Տիգրան։

Հ. Տիգրան ի՞նչ պատերազմի մէջ յաղթեցին Ղուկուղղոսին։

Պ. Ղուկուղղոսը Հայաստան մտաւ Տիգրանակերտը պաշարեց. Տիգրան Հռոմայեցւոց քիչութիւնը տեսնելով անհոգ էր ճեացել. վասն որոյ Ղուկուղղոսը յանկարծ վերայ վազելով Տիգրանին զօրքը հալածեց և Տիգրանակերտը առաւ։

Հ. Ղուկուղղոսը կարողացա՞ւ իւր յաղթութեան վերայ ուրախանալ։

Պ. Ո՛չ. վասն զի լսեց որ Տիգրան նորա ուրեշ տեղ թողած զօրացը վերայ հասնելով լաւ ջարդել էր. և քիչ մի ժամանակից յետոյ նորա վերան էլ հասնելով Միհրդատին հետ, վերջապէս Հայաստանից հալածեց։

Հ. Հռովմայեցիք Ղուկուղղոսին տեղը զո՞վ յուղարկեցին.

Պ. Պոմպէոսը, և Ղուկուղղոսը յետ կանչեցին։

Հ. Միհրդատ ի՞նչու ինքը իւրան սպանեց.

Պ. Իւր Փառնակէս որդին և Կաստոր նախարարը կաշառք առած Հռովմայեցւոց կողմը անցին. ինքն էլ մի բերդի մէջ անօգնական պաշարուելով ինքը իւրան սպանից Պոմպէոսին ձեռքը չընկնելու համար (59)։

Հ. Տիգրան երբ որ լսեց Միհրդատայ մեռնիլը ի՞նչ արաւ.

Պ. Տեսանելով որ իւր Տիրան որդին էլ ապստամբվել է իւրանից, և ինքն էլ ծերացած, հաշտութիւն արաւ Պոմպէոսին հետ, և այնպէս պատերազմը վերջացաւ։

Հ. Տիգրան Պոմպէոսին գնալուց յետոյ Հռովմայեցւոց անից վրէժը առաւ։

Պ. Միջագետաց 'ի նորոյ տիրեց, և Գաբինոս Հռովմայեցւոց զօրապետը փախցրեց Եգիպտոս։

Հ. Տիգրան ի՞նչու համար Պարսից Երշէզ թագաւորին տուաւ 'ի նորոյ նախագահութեան պատիւը.

Պ. Վասն զի տեսաւ որ հռովմայեցիք 'ի

նորոյ Ասորոց և Մեծագնատաց տիրելով իւր վերայ կ'զային որ նրանց չէր կարող առաջը կանգնուլ ծերութեան պատճառաւ, ուստի Արշէղին տուաւ նախագահութիւնը. որ իւրան օգնէ։

Հռովմայեցիք Գաբիանոսին տեղը ո՞վ յուղարկեցին.

Պրասոսը որ յաղթվելով սպանվեց Հայերից և Պարթևներից։

Ո՞վ եղև Հայոց զօրավար Տիգրանայ ծերութեան ժամանակը.

Բարգավիրամ Ռշտունեաց քաշ նախարարը, որ Հայոց և Պարսից բանակին ընդհանուր սպարապետն էր։

Բարգավիրամ ի՞նչ գործողութիւններ արաւ Ասորոց երկրին մէջ.

Որը Ասորոց երկրին տիրեց, և երուսաղէմն էլ առաւ խաբէութեամբ, թէպէտև վերջումը 'ի նորոյ առին Հռովմայեցիք Հայոց ձեռքից։

Այս յաղթութիւններից յետոյ Տիգրան ո՞ւչափ ապրեց.

Պ. Խիստ քիչ. ուրախանք հինգ տարեկան մեռաւ յիսունք չորս տարի թագաւորելից յետոյ։

ԳՐԱԴԱՐԱՆ

ԴԱՍ Ժ.

Աբգարայ Ա. Աշոտ և Աբգար

Հ. Ո՞վ յաջորդեց Տիգրանայ.

Պ. Արտաւազդ Ա. Տիգրանայ որդին։

Հ. Արտաւազդ ի՞նչ ճանապարհ բռնեց.

Պ. Իւր անձն կերուխումի տուաւ, որով Անտոնինաս Հռովմայեցւոց զօրապետը բոլոր Ասորոց երկրին և ուրիշ տեղերէ տիրեց.

Հ. Անտոնինոս ի՞նչ պատճառաւ Արտաւազդին հետ թշնամացաւ.

Պ. Այն պէս Արտաւազդ ընդդէմ իւր խոստմանը ծածուկ պարսից օգնել էր, թէպէտև Անտոնինոսին օգնելու խօսք էր տուել։

Հ. Անտոնինոս ի՞նչ կերպով Արտաւազդը բռնեց։

Պ. Ասելի խաբեութիւով քան թէ քաջութիւամբ բռնեց զնա և ոսկի շղթայով կապած Եղիպտոս տարաւ (30)։

Հ. Արտաւազդին բռնելեց յետոյ Հայաստանի վիճակը ի՞նչ եղև.

Պ. Անտոնինոս տէրեց Հայաստանի, և ստորին Հայքը իւր Աղեքսանդր տղային տուաւ, իսկ վերինք Մարաց։

Հ. Արտաւազդին ո՞վ սպանեց.

Պ. Պղէոպատրայ թագուհին, որ գլուխը կտրել տուաւ։

Հ. Ընչակ ժամանակ Հռովմայեցիք Հայաստանի տէրեցին.

Պ. Հաստ քիչ, վասն զի Արշամ Տիգրանին եղբօր որդին Պարսից օգնութիւամբը Հռովմայեցիները հալածեց և մինչև Կեսարիայ տէրեց (28)։

Հ. Ի՞նչու համար Արշամ սկսեց Հռովմայեցւոց հարկ տալ.

Պ. Օգոստոսից ինդրեց Արտաւազդին եր-

կու տղայքը, որ Հռոմի զերի էին, երբ որ նա չ'տուաւ էն ժամանակը Արշաւիր յանձն առաւ հարկ տալ, միայն թէ նրանք ազատվին ինչպէս ազատվեցին էլ։

Հ. Ի՞նչ պատճառաւ Հայոց թագաւորութիւնը երկու բաժանվեցաւ, այսինքն՝ վերին և ստորին։

Պ. Վասն զի վերին Հայաստանի Հայերը՝ որ Պարսից ձեռաց ներքոյ էին, ճանճ բացած նորանց տուած բռնութիւնից։ Օգոստոս Կայսերը ազատեցին։ Նա էլ Արտաւազդին տղան Տիգրանը թագաւոր դրաւ նորանց, որ փոքր Տիգրան ասուց։ Այս վերին Հայոց թագաւորութիւնը յիսունը ինն տարի քշեցին յետոյ, Երուանդ ստորին Հայոց թագաւորութեան հետ միացրեց։

Հ. Որչափ ժամանակ թագաւոր կացաւ։

Պ. Վասն ինը տարի խաղաղութեամբ թագաւորեց։

Հ. Արդար Արշամայ որդին իւր հօրը յա-

Ջորդելով ի՞նչ անուն հանեց։

Պ. Իւր խելքութեանը և հեզաբարոյութեանը համար ամէնը սկսան Ներոն այր անել նորան, որ վերջը ծեռնատելով Բրիտար սատանց։

Հ. Ի՞նչու համար Հերովդէս Բրիտարին հետ թշնամացաւ։

Պ. Այսպէս զի Հերովդէս կ'ուզէր որ իւր պատկերն էլ Օդոստոսի պատկերին հետ մէկ տեղ մեհեանների մէջին կախուի, Բրիտար այս բանը յանձն չառաւ, և պատերազմ քացվելով մէջերուն։ Հերովդէս չարաչար յաղթվեց։

Հ. Ի՞նչու համար Բրիտար Հռովմ գնաց։

Պ. Այսպէս զի Հերովդէսի կողմը լինողները ոչ պահելով Բրիտարին վերայ չարախօսութիւններ արին Օդոստոս Կայսերը։ Նա էլ Հռովմ գնաց և զանձն արդարացրեց։

Հ. Ի՞նչու համար թագաւորական աթոռը Ասբնից Եղեսիա փոխուեցաւ։

Պ. Այսպէս զի Բրիտար կ'ուզէր Հռովմայե-

ցիներից ապստամբելիս. ուստի ամիսը Նդեսիա փոխադրեց, և սկսեց ամրացնել զայն։

Հ. Ի՞նչ բանից զրդռվեց Աբգար, որ ապստամբվի Ի Հռովմայեցւոց.

Պ. Տիբերիոս Կայսեր ուրախակցութեան համար յուզարկված դեսպանները անարգվեցին Ի Հռովմայեցւոց մի ոչինչ պատճառի համար։

Հ. Ի՞նչ արդեօք եղև որ Աբգար չկարողացաւ ապստամբվիլ.

Պ. Աբգարի Պարսից թագաւորը մեռնելով նոյն օրերումը Պարսկաստան գնաց Աբգար, և նորա որդւոց մէջ ընկած խռովութիւնը խաղաղացրեց, 20 թուին Քրիստոսի։

Հ. Ի՞նչ ծախորդութիւն հանդիպեցաւ Աբգարին Պարսկաստան.

Պ։ Սաստիկ բորոտվեցաւ, որ բժիշկները չկարողացան առողջացնել. վերջը թադէոս առաքեալը բժշկեց։

Հ. Ի՞նչ կերպով Աբգար Քրիստոսի ծանօթացաւ.

Պ. Իմանալով որ իւր ապստամբութեան խորհուրդը Տիբերիոս Կայսեր ականջն է հասել, դեսպաններ յուղարկեց Պաղեստին Հռովմայեցւոց Վառինոս անուն զօրապետին մօտ, որ Իւրան արդարացնեն. դեսպանները տեսնելով այն տեղ Քրիստոսի արած հրաշագործութիւնները եկին պատմեցին Աբգարին։

Հ. Աբգար ի՞նչ արաւ այն ժամանակ.

Պ։ Թուղթ (1) գրեց Քրիստոսի և Իւրան Ընանէ սուրհանդակը էլ յուղարկեց, որ երթայ աղաչէ Քրիստոսի Հայաստան գալու և Իւրան բժշկելու համար, իսկ եթէ որ չ'գայ պատկերը օրինակէ և բերէ։

Հ. Քրիստոս կատարեց Աբգարու խնդիրքը.

Պ. Ոչ. բայց պատասխան գրեց Աբգարին, և խօսք տուաւ որ համբարձուելից յետոյ իւր աշակերտներից մէկը կ'յուղարկէ որ նորան բժշկէ. ինչպէս որ եղև Թադէոս Առաքեալն ձեռքովը 31 ին։

Հ. Աբգար Քրիստոսի հաւատալից ու

բժշկութենից յետոյ ի՞նչ արաւ։

Պ. Նրանք տարի էլ ապրեց ու մի մի թուղթ գրեց Տիրեր Կայսեր, Պարսից և Աստրոց թագաւորներին՝ ցուցանելով Քրիստոսի Աստուածութիւնը. և ընդ ամենը երեսուն ութ տարի թագաւորելից յետոյ սրբութեամբ մեռաւ։

1.) ՕՐԻՆԱԿ։

Հրովարտակին, որ գրեալ է յԱբգարէ Աբգարայէն Հայոց ազգ Յիսուսս, ազգաւորէ նոյ ներ 'ի յերն Անանիայ Սուրհանդակին յԵրուսաղէմ։

Լուեալ է իմ վասն քո, և վասն բժշկութեանդ, որ լինին 'ի ձեռս քո առանց դեղոց և արմատոց, զի որպէս ասի՝ տես դու կուրաց տեսանել, և կաղաց գնալ, և զբորոտս սրբես, և զայս պիղծս և զդեւս հանես, և որ միանգամ չարչարեալ են երկար հիւանդութեամբք, բժշկես, դու և զմեռեալս յարուցանես։ Եւ իբրև լուայ վասն քո զայս ամենայն, եղի 'ի մտի իմում մի յերկուց ա-

ոչ։ կամ թէ դու Աստուած ինձ ինչպէս յերկնից, և դործես զայդ։ կամ թէ որդի Աստուծոյ և զայդ առնես։ Արդ՝ վասն այնորիկ զրեցի ես առ քեզ՝ աղաչել զքեզ, զի աշխատ'ս լցիս և եկեսցես առ իս, և բժշկեսցես զհիւանդութիւնս, զոր ունիմ ես։ Ցա՛ և լուայ զէ հրէայք տրանջեն զքէն, և կամին չարչարել զքեզ։ Բայց քաղաք մի փոքր և զեղեցիկ է իմ, և բաւական մեզ երկոցունցս,,։

2.) ՕՐԻՆԱԿ։

Պատմութենէն հրովարտակին, որ ինչ գրէցաւ յերկուսպզէմ 'ի յերան Աղանէից Սուրհանդրակին ապա Աբգար թշնամն աշխարհի (Սայոց)։

Արանի՛ ինչ այնմիկ, որ հաւատայ յիս՝ իբրև ո՛չ ինչ նորա տեսեալ զիս, զի զրեալ է վասն իմ՝ այսպէս։ զի որք տեսանեն զիս։ ո՛չ հաւատացեն յիս։ և որք ո՛չն տեսանեն, նոքա հաւատացեն և կեցցեն։ Իսկ վասն այնր զի զրեցեր դու առիս՝ դալ ինձ առ քեզ, արժա՛ն է ինձ կատարել ասա զամենայն ինչ,

վասն որոյ առաքեցայ ես։ Եւ իբրև կա-
տարեցից զայս, ապա համբարձայց առ այն-
որ առաքեացն զիս։ Եւ յորժամ համբար-
ձայց առաքեցից զմի յաշակերտաց իմոց աս-
ել, զի զցաւս քո բժշկեսցէ, և կեանս քեզ,
և որ ընդ քեզ են շնորհեսցէ»։

3։) ՕՐԻՆԱԿ։

Թագեոյն Եբիսկոպոսաց Տեսչին Կայսրին Հռովմայեցւոց.

Եբիսար Եղբայր Հայոց՝ Տեառն իմում Տի-
բերի Կայսեր Հռովմայեցւոց՝ խնդալ։ Գիտ-
ելով իմ, թէ ոչինչ ծածկի 'ի քումմէ
թագաւորութենէդ, այլ իբրև զմտերիմ ոք
աւելի ևս իմացուցանեմ 'ի ձեռն գրոյ։ Օ՛խ
հրէայք. որ բնակեալ են 'ի Գաւառս Գա-
ղեստինացւոց, ժողովեալ խաչեցին զՔրիս-
տոս առանց իրիք յանցանաց 'ի վերայ մե-
ծամեծ երախտեացն, զոր արար առ նոսա
նշանս և սքանչելիս, մինչև զմեռեալս անգամ
յարուցանել. և զիտեա՝, զի զօրութիւնքս

այս ո՛չ են սոսկ մարդոյ, այլ Աստուծոյ։ Զի և 'ի ժամանակին, յորում խաչեցինն զնա, արեգակն խաւարեցաւ, և երկիր շարժեալ սասանեցաւ. և ինքն յետ երից աւուրց յարուցեալ 'ի մեռելոց՝ և երևեցաւ բազմաց։ Ց այժմ յամենայն տեղիս անուն նորա 'ի ձեռն աշակերտաց նորա պատանչելիս մեծամեծս կատարէ. որ և. առիս ինքն եղոյց յայտնապէս։ Եւ արդ՝ այսուհետև տէրութիւնդ քո դիտէ, որ ինչ արժան է հրամայել 'ի վերայ ժողովրդեանն հրէից, որք զայն դորձեցին, և զրել ընդ ամենայն տիեզերս, զի երկրպագեսցեն Քրիստոսի իբրև ճշմարիտ Աստուծոյ։ Ողջ լե՛ր։

4.) ՕՐԻՆԱԿ։

Պատասխանատուին Տիբերիոսի Կայսերէ ապ-Ասէգաց Նահապետին Հայոց.

Տիբերիոս Կայսր Հռովմայեցւոց՝ Ասորւոյ Հայոց Թագաւորի խնդալ։ Զմտաւորի մեր մտաբերեալ քո ընթերցան առաջի իմ.

վասն որոյ շնորհակալութիւն 'ի մէնջ քեզ՝ հայցէ. թէպէտև 'ի բազմաց մեր լուեալ յա-ռաջագոյն. եղոյց և Պիղատոս ատուզապէս վասն նշանաց նորա, եթէ յետ յարութեանն 'ի մեռելոց հաւատարիմ եղև բազմաց՝ թէ Աստուած է, վասն որոյ և ես կամեցայ առ-նել զայդ՝ զոր և դու խորհեցար։ Այլ քան-զի սովորութիւն է Հռոմայեցւոց՝ Աստ-ուած 'ի հրամանէ թագաւորի միայնոյ ո՛չ նատուցանել, մինչև ո՛չ փորձեալ քննեցէ նա 'ի Սենկլիտոսէ. վասն որոյ և իմ յայտ-նեալ զրանս զայս Սենկլիտոսին. արհամար-հեաց Սենկլիտոսն. զի ո՛չ քննեցաւ նա յա-ռաջագոյն 'ի նմանէ։ Այլ մեք տուաք հրա-ման ամենայն ումեք, որում և հաճոյ թուեսցի Յիսուս, ընկալցին զնա ընդ Աստուածս. և մահ սպառնացեալ՝ որ չարախօս կացցեն զքրիստոնէից։ Եւ վասն ժողովրդեանն հրէից՝ որ յանդգնեցան 'ի խաչ հանել զնա, զորմէ լսեմ՝ թէ ո՛չ արժանի խաչի էր նա, այլ պատուի և երկրպագութեան, յորժամ առից

պարապումն 'ի պատերազմէս Սպանիացւոց ապատամբոցայ յինէն, քանզի Հաստուցից նոցա զարժանն։

5.) ՕՐԻՆԱԿ։

Սիրէին զբա-նէան Ընդ-գաբա — Տիբէրէա Պայսրն Հռովմայեցւոց։

Ընդար Ընդայ Հայոց՝ Տեառն իմում Տիբերի Կայսեր Հռովմայեցւոց։ Օրթուղթ զրեալ ըստ արժանի քոյոց տէրութեանդ տեսի. և ընդ հրաման մատծութեանդ քոյ ուրախացայ։ Եւ եթէ ո՛չ ցանուցուս ինձ, զոր Սինկղիտոսիդ յոյժ այպանելի է, քանզի առ դոսա 'ի քննութենէ մարդկան տուեալ լինի Ստուածութիւնն. և արդ այսուհետև եթէ ո՛չ լինիցի հաճոյ Ստուածն՝ մարդոյն, Ստուած լինելնա ո՛չ կարէ. և իբրև յայսմանէ՝ մարդոյն արժա՛ն է քաւել զՍտուածն՝ (այս է զէմ ընդ զէմ խոկութեան Ստուածութեան. զի Ստուած է քաւիչ կամ արբիչ մարդոյ. և ո՛չ է մա՛րթ զհակառակն

խորհել)։ Բայց քեզ Տեառն իմոյ հաճոյ թուեցի առաքել զայլ ոք յԵրուսաղէմ փոխանակ Պիղատոսի։ զի լուծցի նա անարդանօք յիշխանութենէն, յոր կարգեցեր զնա, վասն զի արար զկամս հրէից, և խաչեաց զԲրիստոս 'ի տարապարտուց առանց քոյոյ հրամանի։ Ողջ լինել քեզ ըղձամ։

6.) ՕՐԻՆԱԿ

Ողջոյն Աբգարու — Յիսուսէ Նազովրեցւոյ ապրողին Աստուծոյ, որպէս Աբգարու Հեռոյ ապրողի 'ի Բաբելոն։

Աբգար Աբգայ Հայոց՝ որդւոյ իմում Սանատրուկի՝ խնդալ։ Զգիր ողջունի քոյոյ տեսի, և Պերող լուծի 'ի կապանաց և զքնաս նորա թողի։ և եթէ կամ իցէ քեզ, կարդեցես զնա 'ի վերակացութիւն Սինուէի, որպէս և կամիս։ Այլ վասն այնր՝ զի գրեցեր առիս, թէ տուր ածել զայրդ բժիշկ, որ զնշանդ առնէ, և քարոզէ այլ Աստուած՝ որ 'ի վեր է քան զհուր և զջուր, զի պահից և լուայց զմա։

Սա ոչ էր բժիշկ ըստ արուեստի մարդկան, այլ աշակերտ էր որդւոյն Աստուծոյ՝ Աբրահամ էր հրոյ և ջրոյ. և վիճակ հասեալ՝ 'ի կողմանս Հայոց առաքեցաւ։ Բայց յընկերաց նորա զլխաւորաց. Սիմոնն անուն (այն է՝ Կանանացի), նա 'ի կողմանս Պարսից առաքեալ է. խնդիր արարեալ ուխտեցեալ նմա, յորժամ և հայրն քո Աբրահամ, և նա բժշկեսցէ զամենայն հիւանդութիւնս, և ճանապարհ կենաց ցուցցէ։

7.) ՕՐԻՆԱՆ.

Թադէոսն Աքիտպոս ― Աբգարէ ազգին Պարսից։

Աբդար Աբգայ Հայոց՝ Աբրահամի եղբօր իմում Պարսից Աբգայի՝ խնդալ։ Զի առեմ, զի լուեալ է քո վասն Յիսուսի Քրիստոսի որդւոյն Աստուծոյ, զոր խաչեցին հրէայքն, որ յարեաւ 'ի մեռելոց և առաքեաց զաշակերտսն իւր ընդ ամենայն տիեզերս՝ ուսուցանել զհաւատս։ Եւ մի յաշակերտաց նորա զլխաւ-

հոլաց՝ որ Սիմոնն անուանի, է 'ի կողմանս քոյոյ Յերուսաղեմաց, արդ ինդիր արարեալ զոցես զնա, և նա բժշկեցէ զամենայն ախտս հիւանդութեան՝ որ 'ի ձեզ, և ճանապարհ կենաց ցուցցէ, և հաւատացես բանի նորա դու և եղբարք քո, և ամենեքին, որ հնազանդին քեզ կամաւորս։ Զի ախորժելի է ինձ ըստ մարմնոյ ազգականս (Ասրշակունի տանէ Պարթևաց). Լինիլ ինձ մանրիմն հաւատացեալս և ըստ հոգւոյ։

ԴԱՍ ԶՕ։

Ընանէ, Սանատրուկ և Նչոտանք։

Զ. Աբգարու մեռնելուց յետոյ ի՞նչու խռովութիւն ընկաւ Հայաստանի մէջ։

Պ. Զան զի Ընանէ Աբգարու որդին Նղինոյ մէջ թաղաւորեց և վերստին կռապաշտութիւն սկսեց. իսկ Սանատրուկ Աբգարու քեռորդին Շաւարշանի

մէջ թաղաւորից, և կ'ուզէր բոլոր Հայաստանի տիրել։

Հ. Ընանէ ի՞նչպէս մեռաւ.

Պ. Նրբ որ իւր թաղաւորական պալատը նորոգել էր տալիս մի սիւն ընկաւ վերան ու սպանեց, չորս տարի թաղաւորելից յետոյ (38)։

Հ. Ընանէի մեռնելից յետոյ ո՞վ թաղաւոր դառաւ Հայաստանի.

Պ. Սանատրուկը, և Նդեսացւոց առաջին երդում կերաւ, որ թողու ազատ պաշտեն զ'Բրիատոս, թէպէտ վերջը ստից իւր երդմունքին և շատ մարդ նահատակից, ինչպէս նա՛ և իւր Սանդուխտ անջիկը։

Հ. Սանատրուկ քաղաքական շինութեանց մէջ ի՞նչ երևելի գործք արաւ.

Պ. Ամբինը շինեց, որ մի երկրաշարժից աւերվել էր, սքանչելի կերպով նորոգեց, և քաղաքին մէջ տեղը իւր արձանը կանգնացրեց ձեռքը մի դրամ տուած, ուզելով իմացնել որ բոլոր ունեցածը

Ժանկ էր (խարջել էր).

Հ. Սանատրուկ ի՞նչ կերպով մեռաւ.

Պ. Ըստ ժամանակը պատահմամբ նետը տիպաւ և մեռաւ։ Երեսուն չորս տարի թագաւորելից յետոյ։

Հ. Սանատրուկին ո՞վ յաջորդեց.

Պ. Նրուանդ Բ. որ թէպէտև Ադրշակունի էր, բայց թագաւորական ցեղից չէր։

Հ. Նրուանդ ի՞նչպէս թագաւոր եղև.

Պ. Իւր արած քաջութիւններով և քաղցրաբարոյութեամբը ամէնին սիրելի էպ՝է իւրան քաշից, որով Սանատրկին մեռնելից յետոյ նրան թագաւոր դրին նախարարները։

Հ. Նրուանդ իւր թագաւորութիւնը ապահովացնելոյ համար ի՞նչ բան արաւ.

Պ. Սանատրկի բոլոր ցեղը սուր քաշել տուաւ, որ նրանցից միայն Արտաշէս անունով տղան Պարսկաստան փախաւ Բազրատունի Սմբատայ ձեռքովը։

Հ. Ի՞նչու համար Նրուանդ Մինջազեռքը հովմայեցւոց տուաւ և ինքը վերին այքը առաւ.

Վասն զի լսեց Երուաշիսի Պարսկաստանն փախչիլը և ուզեց իւր թագաւորութիւնը այս կերպով զօրացնել. այս պատճառաւ Աթոռն էլ Երմաւիր փոխադրեց։

Հ. Նրուանդին ապած շինութիւններին մէջ ո՞րն է երևելին։

Պ. Նրուանդաշատ քաղաքը՝ որ իւր գեղեցկութեանը պատճառաւը վերջը աթոռն էլ այն տեղ փոխադրեց, և Բաղարանը լուրան մեհեանների համար։

Հ. Ի՞նչ կերպով Երուաշէս իւր թագաւորութիւնը առաւ.

Պ. Դարեհ Պարսից թագաւորին օգնութեամբը, որ նրան միջնորդ դառան Սմբատ և Պարսից նախարարները (88)։

Հ. Երբ որ Նրուանդ լսեց Երուաշիսի գալը իւր վերայ ի՞նչ արաւ

Պ. Որովհետև Ասէացւոց վերայ պատերազմի գնացած էր, իսկոյն հաշտութիւն արաւ և առատ վարձքով շատ զօրք ժողոված սկսեց Երուաշիսի վերայ երթալ։

Հ. Երբ որ Հայերը լսեցին Աբրահամի գալը, ի՞նչ կերպով ընդունեցին նրան։

Պ։ Հաստ ուրախութեամբ, որով շատ նախարարներ բոլոր իւրանց գնդովը Աբրահամի կողմը անցին, որ նրանցից մէկն էր Աբիմաք, որ խիստ քաջ մարդ էր։

Հ. Ո՞ր կողմը յաղթեց.

Պ. Աբրահամ, որով ստիպվեցաւ Երուանդ փախչել Երուանդաշատ։

Հ. Երուանդ ի՞նչպէս մեռաւ։

Պ. Ի նորոյ պատերազմը սաստկանալով Երուանդաշատը առուաւ, և այն տեղ իւր պալատին մէջ Երուանդն սպանվեց Աբրահամի զօրքից (89)։

ԴԱՍ Է.

Երկրորդ Աբրահամից մինչև Տրդատ։

Հ. Աբրահամ Ռ. թագաւորելով իւր առաջին գործը ի՞նչ արաւ,

Պ. Իւր բարեբարեները մեծ պարգևներով պատուեց. Սմբատը ընդհանուր Սպարապետ շինեց, Աղամը իւրան երկրորդ։

Հ. Ուրիշ ո՞ր մարդոյ լաւութիւն արաւ Աբուաշէս.

Պ. Գիսակ նախարարին Սենեքէս անունով որդւոյն, որ մեծ նախարարութիւն շինեց Գիմաքսեան կամ Կամսարական անունով. որովհետև որ Գիսակ դէմքին կէսը կորցրել էր պատերազմի մէջ Աբուաշեսը ազատելու համար։

Հ. Աբուաշէս ո՞րոց հետ պատերազմ արաւ.

Պ. Ալանաց հետ, որոց յաղթեց և թագաւորին տղան պատերազմի մէջ բռնեց։

Հ. Ո՞նչպէս վերջացաւ պատերազմը.

Պ. Ալանաց թագաւորին Սաթենիկ աղջիկը Աբուաշեսին տղաչելով՝ եղբայրը ազատեց ու պատերազմը վերջացրեց, և ինքն էլ Աբուաշեսի թագուհի եղև։

Հ. Աբուաշէս քաղաքական բանների մէջ ի՞նչ բարեկարգութիւններ արաւ։

Պ. Ամէն բանի կարգ կանոն դրաւ և

ծաղկացրեց Հայաստանը, որով իւրանենրին սիրելի և օտարներին նախանձելի եղև թէ ինքն և թէ իւր աշխարհքը։

Հ. Ի՞նչ մանաւոր նախարարութիւն հաստատեց Երատաշէս.

Պ. Ընանաց կողմից Սոթենիկայ համար եկած հարսնածուները մանաւոր ցեղ որոշեց Ղռաւեղեան անունով։

Հ. Երատաշէս հետևեց Հռոմայեցիներից ապստամբելու մասին.

Պ. Շատ ջանք արաւ այս բանիս համար. Տրդատոսի տուրք տալը դադարացրեց և Հռոմայեցւոց զօրաց քանի մի անգամ յաղթեց։

Հ. Երատաշէս Բ. կարողացա՞ւ իւր խորհուրդը յառաջ տանել.

Պ. Ոչ. վասն զի երբ որ լսեց Տրդատոսի անթիւ բազմութեամբ գալը, վախենալով՝ շատ ընծաներով առաջը գնաց և նորան բարկութիւնը իջացրեց։

Հ. Ո՞ւր մեռաւ Երատաշէս.

Պ. Մարանդ Գաւառումը Մարաց կողմե-

ելից դառնալոյ ժամանակը քառասունը մի տարի թագաւորելից յետոյ, այնպէս սղացին նորան համար հայերը. մինչև որ շատերը իւրանք իւրանց սպանեցին գերեզմանի վերայ (129)։

Հ. Ընտաւազդ Ռ. իւր հօրը տեղը յաջորդելով ի՞նչ գործողութիւններ արաւ.

Պ. Հրաման էր և անկարգ կեանք ունեցաւ. բոլոր իւր եղբայրները կշտեցը հեռացրեց, միայն Տիրանը մօտը պահեց իւրան յաջորդ կարգելոյ համար։

Հ. Ընտաւազդ ի՞նչպէս մեռաւ.

Պ. Ոսի դուրս եկած ժամանակը մի մեծ վհի մէջ ընկաւ, ու կորաւ երկու տարի թագաւորելից յետոյ։

Հ. Տիրան Ը. իւր եղբօրը յաջորդելով ի՞նչ ճանապարհ բռնեց.

Պ. Եղբօրը անկարգ և անհոգ ճանապարհը. այն պատճառաւ տասնը երեք տարի թագաւորելից յետոյ կառավարութիւնը Ն-բախնաւու անունով իշխանին յանձնեց և ինքը Նկեղեաց գաւառը քաշուեց։

Հ. Սորա ժամանակը Հռովմայեցիք ի՞նչ-պէս էին Հայոց հետ։

Պ. Երբ որ Անտոնինոս Պիոս Կայսր եղև, Տիրան խնդակցութեան դեսպան յուղարկեց հարկն էլ մէկ տեղ. Անտոնինոս սիրով ընդունեց, և թագ ու ծիրանի յուղարկեց Տիրանին և մի դրամ կարել տուաւ ձեռքը Տիրանին ուսին վերայ դրած։

Հ. Տիրան ի՞նչպէս մեռաւ.

Պ. Վասն երկու տարի թագաւորելից յետոյ մի օր ճանապարհ գնալոյ ժամանակը՝ ձիւնի մի հիւս փուլ եկաւ վերան խեղդեց նրան (151)։

Հ. Տիրանին ո՞վ յաջորդեց.

Պ. Տիգրան Գ. իւր փոքր եղբայրը, որ Պերոզ Պարսից թագաւորին հետ միացած յաղթեց Հռովմայեցւոց և Սեբերիանոս զօրավարին էլ սպանեց։

Հ. Տիգրան այս յաղթութիւնից յետոյ ի՞նչ ճախորդութեան հանդիպեցաւ.

Պ. Որեղէոս Կայսրը լսելով այս էլածները՝ Վերոս Ղուկէոս իւր Կայսերակիցը յու-

ղարկեց, որ եկաւ իւր թշնամիներին յաղթեց, և Տիգրանին վերայ խղճալով զերութիւնից ազատեց, որ մի կնկանից խաբելով բռնուել էր Մեծաղեաքի կողմերը գնացած ժամանակը։

Հ. Երկրորդ Տիգրանին ո՞վ յաջորդեց.

Պ. Վաղարշ իւր որդին, որա ժամանակը Հայաստանի վերայ եկին Հիւսիսային ազգերը, ինքն էլ քաջութեամբ պատերազմելով փախցրեց. բայց ինքն էլ վերաւորվելով մեռաւ քան տարի թագաւորելից յետոյ։

Հ. Խոսրով Ը. թագաւորելից յետոյ իւր առաջին գործողութիւնը ո՞րը եղև։

Պ. Հիւսիսային ազգաց վերայ պատերազմի դուրս եկաւ, իւր հօրը վրէժը առնելու համար, և յաղթեց նրանց (214)։

Հ. Ընտանինաս Կարակալլա Խոսրովու ի՞նչ բան արաւ.

Պ. Կարակալլա երբ որ Մեծաղեաքի կողմերն էր եկել, Խոսրով գնաց առաջը նրան պատուելու համար. բայց Կարա-

իսլամ նրան չ'թողեց որ յետ դառնայ, մինչև որ Հայերը կատաղած սկսեցին Պարակալային վերայ վազել։

Հ. Ի՞նչու համար Ամրաշիր Պարսից թագաւորը հետևեց Խոսրովին սպանելու.

Պ. Ամրաշիր Պարսից Աբտաւան թագաւորը սպանեց, որ ազգաւ Ամշակունի էր, և ինքը թագաւոր դառաւ այս բանիս համար Խոսրով նրան ընդդէմ դուրս եկաւ, և շատ անգամ յաղթելով մինչև հնդկաստան փախցրեց նրան, և չէր թողում որ հանգիստ թագաւորութիւն անէ։

Հ. Ամրաշիր երբ որ պատերազմով չ'կարողացաւ Խոսրովին յաղթել. ի՞նչ արաւ.

Պ. Ամենամեծ բաներ խոստացաւ այն մարդին, որ Հայաստան երթալով Խոսրովին սպանէ։

Հ. Ո՞վ յանձն առաւ այս բանս։

Պ. Ընակ Պահլաւունին, որ Հայաստան եկաւ, ձևացնելով որ Ամրաշիրի բռնու-

թիւններից է փախել։ Այս ճանապարհորդութիւնումը ծնեց իւր որդին՝ մեր սուրբ Գրիգոր Լուսաւորիչը։

Հ. Ինակ ի՞նչպէս կատարեց իւր չարութեան խորհուրդը.

Պ. Մի օր որսի ժամանակը նեռով զարկեց սպանեց Խոսրովին, և նրա որ թագաւորի հետ եղած մարդիկները ուզեցին նրան սպանել, փախչելու ժամանակը դեռը ընկաւ և խեղդուեց (259)։

ԴԱՍ Բ.

Տրդատ և Խոսրով Բ.

Հ. Ովքեր Խոսրովու մեռնելից յետոյ Հայոց վիճակը ի՞նչպէս եղև.

Պ. Նկաւ Արտաշիր և բոլոր Հայոց տիրեց և Խոսրովին ցեղը ջնջել տուաւ. բայց նրանցից Տրդատ անունով մի տղայ և նորա Խոսրովիդուխտ քոյրը ազատվեցան Արտաւազդ Մանդակունուն և Օտայ Սմատունուն ձեռքովը։

Հ. Երտաւազդ Արանդակունին ո՞ր փախ-
ցրից զՏրդատ.

Պ. Նախ Վեսարիա ու վերջը Հռոմ, ուր
որ շատ քաջութիւններ անելով մեծ
պատուոյ հասաւ։

Հ. Երտաշիր ո՞րչափ ժամանակ տիրից Հա-
յոց վերայ և ի՞նչ գործողութիւն ա-
րաւ.

Պ. Երտաշեսի անկած տահմանագլխի քարե-
րին վերայ արձանագրութիւնները ջնջել
տալով իւր անունը գրել տուաւ Պարս-
կերէն. քանը վեց տարի իշխեց Հայոց
և Պարսից վերայ ու մեռաւ.

Հ. Երտաշիրին ո՞վ յաջորդեց.

Պ. Իւր Շապուհ որդին, որ նրան ժամա-
նակը Տրդատ Հռոմայեցի զօրքով ե-
կաւ և առաւ իւր Հայրենական ժա-
ռանգութիւնը։

Հ. Տրդատ ի՞նչ արդիւնք արաւ. որ Հռ-
ոմայեցիքը իւրան օգնութիւն տուին.

Պ. Դիոկղետիանոսի կողմից Գոթացւոց

Հռչէ հսկայ ու քաջ թագաւորին հետ մենամարտութիւն անելով, յաղթեց նոյն և Հռոմայեցիքը մեծ նախատանքից ազատեց.

Հ. Երբ որ Տրդատ Կեսարիա հասաւ, Հայերը ի՞նչպէս ընդունեցին նրան.

Պ. Ամէն նախարարներ առաջը ելանելով նրան իսկոյն թագաւոր դրին, և բոլոր Հայաստան մեծ ուրախութիւն եղև (286).

Հ. Տրդատ Հայաստանի տիրելից առաջ ուրիշ ի՞նչ գործողութիւն արաւ.

Պ. Նկեղեաց գաւառը գնաց Անահիտ կուռքին շնորհակալութիւն անելու համար, և այն տեղ իմանալով որ Գրիգոր Լուսաւորիչ քրիստոնեայ է և Անակայ որդին, շատ չարչարելից յետոյ նրան մի խոր վիրապի մէջ քցել տուաւ.

Հ. Տրդատ ղՇապուհը ի՞նչպէս դուրս փախցրեց Հայաստանից.

Պ. Նրանք անդամ Շապուհ պատերազմի դուրս եկաւ, բայց երբք անդամ էլ յաղթուե-

լով ։ այստանը թողեց և մինչև Ընտրապատական աշխարհքը փախաւ։ Ուրիշ շատ յաղթութիւններ և քաջութիւններ անելով Տրդատ բոլոր մօտակայ ազգերին սիրտը վախ քցեց։

։։ Տրդատ քրիստոնեաները հալածելուն համար ի՞նչ պատիժ կրեց։

Պ։ Որովհետև ։ռոմից եկած ։ռիփսիմեան կուսանքները նահատակեց, ինքն էլ Ընտուածանից պատժվելով որսի ժամանակը խոզի կերպարանք փոխվեց և վայրենացաւ։ Իշխաններից շատերն էլ նոյն պատիժը կրեցին։

։։ Ո՞վ բժշկեց զՏրդատ։

Պ։ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը, որ իբրև տասնը հինգ տարի վիրապումը կենալից յետոյ էլ դեռ կենդանի էր Ընտուածոյ հրաշքովը, և վիրապից դուրս գալով բժշկեց զՏրդատը և զբոլոր նախարարները, և զՌրիստոս քարոզելով ամենին մկրտեց։ Ինքն էլ Կեսարիա յուղարկելով Ընդ Եպիսկոպոս ձեռնադրվեց։

Հ. Տրդատ Արիսատնեայ լինելից յետոյ ի՞նչ մանաւոր գործողութիւն արաւ.

Պ. Լսելով որ Կոստանդիանոս էլ Արիսատնեայ է դարձել, սուրբ Գրիգորի հետ 'ի միասին Հռոմ գնաց, ուր որ սուրբն Սեղբեստրոս պապը հրաման տուաւ, որ Լուսաւորչի աթոռն էլ Պատրիարգական աթոռ համարվի (319).

Հ. Տրդատ Հռոմից դառնալից յետոյ ի՞նչպէս գտաւ Այաստանը.

Պ. Շատուհ Հիսիային աղգաց հետ միացած յարձակվել էր Այաստանի վերայ, Տրդատ շուտով պատերազմի պատրաստվելով ամէնները փախցրեց. և Հիսիային աղգաց Գեռեհոն անունով քաջ զօրավարը մէկ զարկվածով ձիովը միտեղ երկու կտոր ձղեց։ Այս պատերազմներովը Տրդատ բոլոր Այոց քաղաքները ազատեց Պարսից ձեռքից որ նրանց բռնութիւնովը տիրել էին։

Հ. Ի՞նչպէս մեռաւ Տրդատ.

Պ. Տեսնելով նախարարաց անկարգութիւն-

ներքը, թողեց թագաւորութիւնը և Լուսաւորչի ճգնութեան տեղը քաշուելով այն տեղ կ'բնակէր. նախարարները կրկին անգամ նրան կանչելից յետոյ մահատեղ տուին նրան և այնպէս մեռցրին յիսունը վեց տարի թագաւորելից յետոյ (341)։

Ի. Տրդատայ մեռնելից յետոյ ի՞նչ խռովութիւններ եղին Հայաստանի մէջ.

Պ. Աղուանք ապստամբեցին և Սանատրուկ անունով մէկին իրանց վերայ թագաւոր դրին. էնպէս էլ Ռակուր Աղձնեաց իշխանը. իսկ Ռզնունիք՝ Սանատաճիանք և Որդունիք իրար հակառակ դուրս գալով միմեանց ջարդեցին։

Ի. Տրդատայ ո՞վ յաջորդեց.

Պ. Նախարարները տեսնելով այս անկարգութիւնները սուրբ Ներսէս Պարթևը Պարթղիկոսին հետ միացած Տրդատի որդին Խոսրով երկրորդը թագաւոր դրին Կոստանդ Կայսեր հաճութիւնովը, որ նրան համար թագ ու ծիրանի յուղարկեց։

Հ. Ներկրորդ Խոսրովը թագաւորելից յետոյ ի՞նչ գործողութիւններ արաւ.

Պ. Իւր թուլութեամբը՝ անհոգութեամբը ամենևին յիշատակի արժանի մի գործողութիւն չի արաւ. Դուին (պրըս կերէն բլուր) քաղաքը շինեց և աթոռը այն տեղ փոխադրեց։

Հ. Խոսրովու ժամանակը ի՞նչ երևելի զօրավար կար Հայաստան.

Պ. Վահան Ամատունին, որ մեծ յաղթութիւն արաւ Շապուհոյ և Հիւսիսային ազգաց ընդդէմ, որ առաջ Խոսրովու յաղթելով վաղարշապատ հասել էին։

Հ. Խոսրով ո՞րչափ ժամանակ թագաւորեց.

Պ. Ինն տարի, և նրան յաջորդեց իւր որդի Տիրան Բ. (353)։

ԴԱՍ· Թ։

Տիրան և Աշոտ

Հ։ Տիրան ի՞նչ կերպով թագաւորեց։

Պ։ Սուրբ Աղթանիսի հետ Սամոսատ գնաց և այն տեղ Կոստանդ Կայսրը թագաւորացրեց նրան։

Հ։ Շապուհ երբ որ լսեց Տիրանայ Սամոսատ գնալը ի՞նչ արաւ։

Պ։ Ընթիւ զօրք տալով իւր Ներսէհ եղբօրը ձեռքը։ Հայաստան յուղարկեց, որ երթայ թագաւորէ Հայոց վերայ։ բայց Աշշաւիր Կամսարական, որ նրան յանձնված էր Հայաստանը, նախարարները միացնելով յաղթեց և դուրս փախցրեց զՆերսէհ։

Հ։ Տիրան երբ որ Հայաստան դարձաւ ի՞նչպէս սկսաւ կառավարել իւր տէրութիւնը։

Պ։ Բոլորովին անկարգութեամբ և թուլութեամբ, այն պատճառաւ Շապուհին հետ հաշտութիւն խօսեց և սկսեց տուրք

տալ նրան էլ ի՞նչպէս տալիս էր Յու-
նաց։

Հ. Տիրան ի՞նչու համար սուրբ Յուսիկ
Հայրապետին սպանեց.

Պ. Վասն զի երբ որ Յուլիանոս ուրացող
Այսրը՝ Պարսից վերայ կ'գնար, իւր
սիղծ պատկերը յուղարկեց Տիրանայ որ
եկեղեցւոյ մէջը կախէ, երբ որ սուրբ
Յուսիկ ընդդիմացաւ այս բանիս և պատ-
կերը ոտքին տակը տալով կոտրատեց,
թագաւորը բարկութենից այնչափ ծեծել
տուաւ սուրբ Հայրապետին որ մեռաւ։

Հ. Ի՞նչու համար Հապուհ Տիրանին
աչքերը հանել տուաւ.

Պ. Վասն զի Տիրանը իւր երդմանը հակա-
ռակ Յուլիանոսին օգնել էր՝ Պարսից
վերայ գնալոյ ժամանակը։ Հապուհ էլ
այս բանիս վրէժը առնելու համար խա-
բէութեամբ իւր մօտ կանչեց Տիրանը և
աչքերը հանել տալով Կուաշ աւանը
յուղարկեց (362)։

Հ. Տիրան ի՞նչպէս մեռաւ.

Պ. Մի անգամ իւր Ընշակ տղային մի յանդիմանութեան թուղթ գրեց. Ընշակ էլ բարկանալով սպանել տուաւ զՀայրը։

Հ. Ընշակ իւր հօրը տեղը յաջորդելով ի՞նչպէս կառավարութիւն ունէր.

Պ. Հօրը նման անկարգ և. քան զնրան էլ զէշ, որով ազգին միջին էլած ամէն տեսակ խեղճութեանը և անպիտանութեանը պատճառ և յառաջացուցիչ դառաւ։

Հ. Ընշակայ ժամանակը ի՞նչ երևելի մարդ կար Հայաստանի մէջ.

Պ. Սնծն ՝Սերսէս տէրը Հայրապետը, որ Լուսաւորչի թոռան թոռն էր, որն որ շատ մեծամեծ լաւութիւններ արաւ թէ ազգին և թէ թագաւորութեան։

Հ. Ի՞նչու համար Վաղինախանոս Ընշակայ վերայ պատերազմ բացաւ.

Պ. Վասն զի Վաղինախանոսի յուղարկաճ դեսպաններըը, որք եկել էին համոզել զԸնշակը Պարսից ծառայութիւնից յետ կե-

նալոյ համար արհամարհեց. այն ժամանակ Վաղենտիանոս էլ մեծ պատրաստութեամբ իւր թէոդոս զօրապետը յուղարկեց, որ զայ այս արհամարհանաց վրէժն առնէ։

Հ. Ո՞վ նստացրեց Վաղենտիանոսի բարկութիւնը։

Պ. Սենծն՝ Սերսէս որ Սատամպօլ գնաց և իւր սքանչելի և քաղցր խօսակցութիւնովը թագաւորին համոզեց, ու ամէն բան կարդի դրաւ։

Հ. Ընշակայ արած անիրաւ սպանութիւնը ո՞րն է.

Պ. Իւր Տրդատ եղբօրը Գնել որդւոյն սպանութիւնը. ունեցած հարստութեանը վերայ նախանձելով, որով Գնէլայ Փառանձեմ կինը իւրան երկրորդ կին առաւ. նա էլ Ամիմպիադայ Ընշակին կինը թունաւորեց։

Հ. Ընշակ ի՞նչպէս շէն արաւ Ընշակաւան քաղաքը.

Պ. Այս քաղաքը իւր անունովը շինել

սկսեց և հրաման հանեց, որ ամէն ան-
զգամ և չարագործ մարդիկ այն տեղ
փախչելով ազատին, որով փոքր ժա-
մանակի մէջ բոլոր քաղաքը լցուեց։

Զ. Այս անիրաւ հրամանին հետևան-
քիցը ի՞նչ դուրս եկաւ.

Պ. Նախարարները բարկացած՝ Շապուհը
իւրանց օգնութիւն կանչեցին, և նորա
օգնութեամբը Արշակաւանը կոծանեցին,
բնակիչները Ջարդեցին բաց յերախայից,
և Արշակն էլ փախցրին որ գնաց Ա՛րաց
ապաւինեցաւ։

Զ. Արշակ Ա՛րացւոց անից օգնութիւն գը-
տաւ.

Պ. Շատ զօրք հաւաքած նախարարներին
հետ սկսեց պատերազմիլ և երկու տա-
րուայ չափ երկու կողմից էլ մեծամեծ
կոտորվածներ եղեն. այն միջոցին Ա՛ա-
ղէս Կայսրն Արշակայ ընդդէմ զօրք
յուղարկեց՝ ասելով որ Շապուհին օգ-
նել է Յունաց վերայ գալու ժամա-
նակը։

Հ. Ընշակ երբ որ ամէն թշնամիքներից պաշարվեց, ի՞նչ հնարք մտածեց.

Պ. Ուրիշ անգամների նման 'ի նորոյ սուրբ Ներսէսի ապաւէնեց, նա էլ շատ դժուարութեամբ նախարարները հաշտացրեց թագաւորին հետ, և վերջը Ընշակին որդին Պապը պատանդ (զաւալ) առաջ՝ Սատամպօլ Վաղէս Կայսեր մօտ դնաց. բայց Վաղէս Ընշոսեան լենելով իսկոյն քշել տուաւ սուրբ Ներսէսը և դաշինքն էլ չընդունեց։

Հ. Երբ որ լսեց Ընշակ սուրբ Ներսէսի աքսորելը ի՞նչ արաւ.

Պ. Սկսաւ արձակ համարձակ իւր անկարգութիւնները անել. շատ մարդ անիրաւութեամբ սպանել տուաւ, յորմէ 'ի նորոյ խռովութիւններ սկսեցին։

Հ. Ընշակ ի՞նչպէս բռնվեց.

Պ. Շապուհ ոմն ունենալով Ընշակայ փեսայ 'ի նորոյ շատ զօրք յուղարկեց, որ նրան հետ միացան նա'և նախարարները և Ընշակը այն աստիճան նեղը քցեցին

որ Պարսից անձնատուր եղև։

Հ. Շապուհ ի՞նչ արաւ զԱրշակ.

Պ. Լաւ յանդիմանելոց յետոյ անյուշ ա-
սուած բերդը յուղարկեց։

Հ. Շապուհ ի՞նչ կերպով հետևեց հայրը
արևապաշտ անելու։

Պ. Ներուժան Արծրունի և Վահան Մա-
միկոնեան ուրացող նախարարներին թագ-
խոստայաւ և շատ զօրք տուաւ ձեռ-
քերնին, որ երթան հայերը արևապաշտ
շինեն. նրանք էլ ամէն չարիք հասցրին
հայոց (378)։

Հ. Արշակ ի՞նչպէս մեռաւ.

Պ. Լսելով այս բոլոր էլած չարիքները.
յուսահատելով ինքն իւրան սպանեց
քսան տարուայ չափ թագաւորելից յե-
տոյ.

ԴԱՍ Ժ.

Պապ և Կայսրապետ։

Հ. Ի՞նչ կերպով Հայերը էս թշուառութիւններից ազատվեցին.

Պ. Սրբոյն Ներսիսի աղաչանքովը՝ մեծն Թէոդոս Երշակին որդին Պապը թագաւոր դրաւ Հայոց վերայ. և Յունաց զօրքով Հայաստան յուղարկեց, և նրանք եկին Պարսիկները դուրս արին (381)։

Հ. Այս պատերազմին ժամանակը սուրբն Ներսէս ի՞նչպէս օգնեց Հայոց բանակին։

Պ. Նրբ որ երկու կողմից էլ ահեղ պատրաստութեամբ պատերազմում էին սուրբն Ներսէս Սպատ սարին վերայ կանգնած բազկատարած սկսեց աղօթել և մի քամի դուրս եկաւ ու Պարսից նետերը իւրանց վերայ կ'դարձնէր, և արևին առաջը մի ամպ գալով արևը ծածկեց որ Հայերը նեղութիւն չէ քաշեն։

Հ. Ո՞վ լացրուց պատերազմը.

Պ. Սմբատ Բագրատունին, որ Սենուժան Հայ ուրացող իշխանին ետևից վազելով բռնեց նրան և տաքցրած շամխուրի երկաթը պսակաձև գլխին դնելով ասեց "սրանով կ'պսակեմ զքեզ Սենուժան որ կ'ուզէիր թագաւոր լինիլ Հայոց,,. և այսպէս սպանեց նրան, որով և պատերազմը վերջացաւ։

Հ. Զաղ երբ որ թագաւորեց ի՞նչ գործոզութիւն արաւ.

Պ. Յունաց զօրքը առատ ընծաներով ճանապարհ դրեց, և ինքը ու նախարարները էլ մէկ տեղ խօսք տուին որ Սերսխի որ նրանցից յետոյ հաւատարմութեամբ ծառայեն Աստուծոյ։

Հ. Ի՞նչու համար Զաղ չը Սերսխի թոյն տուաւ.

Պ. Վասն զի սկսեց նրան արած չարութիւնները և անկարգութիւնները յանդիմանել. Զաղ չ'կարողանալով յայտնի մեռցնել՝ թոյն տուաւ նրան (383).

Հ. Ի՞նչու համար Թէոդոս Կայսրը Պապը սպանել տուաւ.

Պ. Վասն զի Պապը Կայսերէցը ապստամբելով՝ Տիրենոխանոս Կայսր զօրավարը փախցրեց Հայաստանից. բայց վերջը յաղթվելով բռնվեց. Թէոդոս Կայսրն էլ զլուխը կտրել տուաւ երեք տարի Թագաւորելից յետոյ:

Հ. Պապին տեղը ո՞վ յաջորդեց.

Պ: Թէոդոս՝ Վարդան Երէշակունի քաջ տղամարդը Թագաւորացրեց, որ իւրան քաջութիւններովը երևելի էր էլած Յունաց մէջ:

Հ. Վարդանայ զլխաւոր քաջութիւնները ո՞րն են.

Պ. Թագաւոր չ'էլած. մի անգամ Հինդ Լոնգոբարտացւոյ առաջը դուրս գալով մը մենու հետայ հինդն էլ սպանեց. մի բերդի վերայ վազելով տան եօթն հոգի հետ հետէ նետով սպանեց. և ինքը չ'վնասվեց. դարձեալ քսան երկու կանդուն մի դետի կրնով մէկ շնչով այս կողմից այն կողմը թռաւ.

Հ. Ի՞նչու համար Արարդատ Կայսերից ապստամբվեց.

Պ. Տեսանելով որ Յունաց զօրավարները կ'ուզեն իւր վերայ իշխել՝ չդիմանալով այս բանիս. Հապուհին օգնութեամբը ուզեց ապստամբվիլ.

Հ. Ո՞ւրաջ գնաց Արարդատայ ապստամբութեան խորհուրդը.

Պ. Ոչ. վասն զի լսելով որ Կայսրը իմացել է այս բանս, Կոստանդնուպօլիս դընաց որ իւրան արդարացնէ. Կայսրը բարկութիւնից առանց տեսնալու խսկոյն քշել տուաւ նրան մի հեռաւոր (Թոռլէս անուն) կղզի։

Հ. Արարդատայ աքսորվելից յետոյ ի՞նչ վոխոխութիւն եղև Հայոց թագաւորութեան մէջ։

Պ. Թոէոդոս Պապայ երկու որդիքը, այսինքն՝ Արշակը և Արշարշակը թագաւորդրաւ Հայոց վերայ, պատճառ որ, թէ մէկը ապստամբվի. միւսը հաւատարիմ մնայ։

Հ. Այս երկու թագաւորները ո՞ւր դրին իւրանց աթոռները.

Զ. Երշակ Դուին դրաւ իւր աթոռը. իսկ Վաղարշակ Արեզա, բայց սա մի տարի էլ չ'թագաւորելով մեռաւ (388)։

Է. Վաղարշակին մեռնելից յետոյ ուրիշ ի՞նչ նոր փոփոխութիւն եղև.

Ը. Յոյնք և Պարսիկք որոշեցին նոյն միջոցին որ Հայաստանին արևելեան կողմը Պարսից իշխանութեան տակ լինի՝ արևմտեանը Յունաց. այս պատճառաւ Երշակ չուզելով Պարսից ծառայել՝ Յունաց մանը գնաց և աթոռը Արեզա փոխեց։

ԴԱՍ ԺԱ.

Խոսքով Դ. Վաղարշակայ և Երվանդայ Դ։

Հ. Երբ որ Երշակ իւր նախարարներովը մէկ տեղ Յունաց մասը գնաց, Պար-

սիկք զո՞ք զբին թագաւոր իւրանց մասին մէջ.

Պ. Խոսրով անուանով մէկը Ըրշակունեաց ցեղէց։

Հ. Ի՞նչու համար Ըրշակայ և Խոսրովու մէջ պատերազմ բացվեց.

Պ. Այսն զի քանի մի նախարարներ Ըրշակայ կողմից Խոսրովին մասը անցանելոց ժամանակը յափշտակեցին Ըրշակայ գանձերը և Խոսրովին համար տարին։ Ըրշակ աղաչանքով ուղեց իւր գանձերը, բայց երբ որ Խոսրով մոլիկ չ'արաւ, պատերազմ բացուեց մէջերնին.

Հ. Ո՞ր կողմը յաղթեց.

Պ. Երկու կողմից էլ սաստիկ ջարդ լինելից յետոյ Խոսրով յաղթեց։ Ըրշակ փոքր ինչ ժամանակ ապրելից յետոյ մեռաւ։

Հ. Ըրշակայ տեղը զո՞ ոք թագաւոր դրին Յոյները.

Պ. Թագաւորի տեղ մի Յոյն կոմս դրին ու Պազաւոն քաջ Հայ իշխանն էլ սպարապետ։

Հ. Յունաց բաժնին Հայերը երբ որ այս բանս տեսին ի՞նչ արին.

Պ. Սախարարները աղաչեցին Խոսրովու որ իւրանց էլ իւր մասին միջը ընդունի և իւրանց առաջի կալուածները տայ. Խոսրով յանձն առաւ, և սրանով զօրացած Հայոց խօսք տուաւ որ բոլոր հարկը կ'վճարէ թէ որ ինքը իշխէ Յունաց բաժնին էլ. Հայքն էլ հաւանեց։

Հ. Ի՞նչու համար Շապուհ Խոսրովին վերայ յուղարկեց իւր Արտաշիր որդին.

Պ. Սախարարներից ոմանք թշնամութիւն ունենալով Խոսրովին հետ, գնացին սուտ զանգատ արին Շապուհին թէ Խոսրովը կուզէ ապստամբիլ. նա էլ շատ զօրքով իւր Արտաշիր որդին յուղարկեց։

Հ. Արտաշիր ի՞նչ կերպով բռնեց Խոսրովը.

Պ. Խոսրով տեսնելով որ ամէն կողմից անօգնական մնաց. Արտաշիրի մօտ գնաց.

նա էլ շղթայով կապած Ընյուշ բերդը յուղարկեց ու Խոսրովին Վռամշապուհ եղբայրը թագաւորեց (392)։

Հ. Վռամշապուհ ի՞նչպէս թագաւորութիւն արաւ.

Պ. Խաղաղութեամբ ու խելք կերպով և իւրան հաւատարիմ հպատակութեամբը Պարսից Վռամկրման թագաւորին էլ շատ սիրելի եղաւ։

Հ. Վռամկրման ի՞նչ փոխարէն արաւ Վռամշապուհին հաւատարմութեանը.

Պ. Նորա Խոսրով եղբայրը Ընյուշ բերդից հանեց և պատուով կ'պահէր։

Հ. Վռամշապուհի ժամանակը ի՞նչ ուսումնական յառաջադիմութիւն արաւ մեր ազգը.

Պ. Սուրբ Սահակ և սուրբ Մեսրոպ տեսնելով ազգին խաղաղութիւնը և Վռամշապուհին ուսումնասիրութիւնը հետևեցին Հայերէն գիրը գտնելու, և դպրոցներ բանալով ազգին ուսումնական կենդանութիւն տուին (406)։

Հ. Ռամշապուհ ո՞րչափ ժամանակ թագաւորեց.

Պ. Հանը մէկ տարի՝ ամենայն բարեկարգութիւն և ուղղութիւն անելով։

Հ. Ռամշապուհին տեղը ո՞վ թագաւորեց.

Պ. Դ. նորոյ Խոսրով թագաւորեց երկրորդ անգամ, որովհետև որ Ռամշապուհին Ներսեհ որդին դեռ փոքրիկ էր.

Հ. Խոսրով երրորդը երկրորդ անգամ ո՞րչափ ժամանակ թագաւորեց.

Պ. Մէկ տարի միայն ու մեռաւ (414)։

Հ. Երրորդ Խոսրովից յետոյ ի՞նչ պատճառաւ Հայաստան տակնուվրայ դարձաւ.

Պ. Ան զի Յազկերտ ուզելով որ Հայերը կրակապաշտ շինի իւր որդին Շապուհը Հայոց թագաւոր դրաւ։

Հ. Ի՞նչ կերպով Յազկերտի այս խորհուրդը առաջ գնաց.

Պ. Հանի մի տարուց յետոյ Յազկերտ հիւանդացաւ. այն պատճառաւ Շապուհ

էլ Պարսկաստան գնաց որ թագաւորութիւնը առնէ. բայց Յազկերտ մեռաւ և ինքն էլ սպանվեց։

Հ. Շապուհի գնալից յետոյ նախարարները ի՞նչ արին.

Պ. Նորա թողած զօրացը վերայ վազեցին և լաւ ջարդ տալով փախցրին. բայց Վռամ Պարսից թագաւորից վախելով ամէնքն էլ ցրուեցան և իւրանց բերդերը քաշուեցին։

Հ. Վռամ Խոսրովին տեղը զո՞ք թագաւոր դրաւ Հայոց վերայ.

Պ. Սեր ազգը լաւ սիրուն չարչարելից յետոյ թագաւոր դրաւ Վռամշապուհին Արտաշէս որդին տասնը ութ տարեկան ժամանակը և անունն էլ փոխելով Արտաշիր դրաւ։

Հ. Արտաշէս կամ Արտաշիր ի՞նչպիսի կառավարութիւն ունէր.

Պ. Անկարգ և մոլի լինելով ամենեցուն ատելի եղև։

Հ. Ի՞նչպէս վերջացաւ Արշակունեաց թագաւորութիւնը.

Պ. Նախարարները ձանձրացած Երատաշեսին անկարգութիւններից, Վռամին աղաչեցին, որ թագաւորութիւնը վերցնէ, և իւրանց վերայ մի Պարսիկ մարզպան դնէ. Վռամ էլ կատարեց խնդիրքները։

Հ. Ընդ՞ինչ մէկը որ թագաւորութիւնը վերացնելուն առաջը առնու.

Պ, Սուրբ Սահակ Հայրապետը շատ ջանք արաւ նախարարներին չար միտքը փոխել, նա՛և Վռամայ առաջին էլ պաշտպանեց զԵրատաշէսը. բայց Վռամ մոլիկ ջանելով բանտ դնել տուաւ նրան Երատաշէսին էլ աքսորեց (428)։

Հ. Երատաշէս ո՞րչափ ժամանակ թագաւորեց.

Պ. Վեց տարի՝ աքսորելից վերջը քանի մի տարի ապրեց և մեռաւ։

— ԿԿԵ. ՀԼ —

Ժամանակ Մարգպանաց։

ԳԼԽ. ԺԴ։

Ամիհրշապուհ և Ամբրոնանց պատերազմ։

Հ. Մարշակունեաց թագաւորութիւնք վերջանալից յետոյ Հայաստանի ո՞վ կ'իշխէր.

Պ. Պարսից թագաւորը իւր կողմից մի իշխան կ'յուղարկէր, որ Հայաստանի հարկը ժողովէ, և այն տեղ նստելով ղգուշանայ աշխարհքին. այս իշխանը Մարզպան կ'ասուէր։

Հ. Ո՞վ եղև առաջին Մարզպանը։

Պ. Ամիհրշապուհ անունով մի Պարսիկ։

Հ. Ի՞նչ աչքով կ'նայէր սա Հայոց ազգին.

Պ. Ընութեամբ լաւ մարդ լինելով խիստ լաւ նայեցաւ ազգին տանը չորս տարի։

Հ. Ամիհրշապուհի տեղը ո՞վ դրվեց Մարզպան.

Պ. Վասակ ոչնչաց իշխանը, որ իւր ազգին ամենայն չարիք հասցրեց (442)։

Հ։ Ի՞նչ պատճառաւ Յաղկերտ Պարսիկ Մարզպանի տեղ Վասակը դրաւ.

Պ. Որպէս զի Ներսեհով Հայոց սիրտը դէպ 'ի իւրան քաշի և վերջը ուզածը անի։

Հ. Ուրիշ ի՞նչ հնարք բանացրեց Յաղկերտ Հայերը կրակապաշտ շինելոյ համար։

Պ. Հրաման հանեց որ Հայերը իւրան զօրք տան, որպէս զի սրբանով ազգին մեծերը և պատերազմական զօրութիւնը հեռացնէ որ չ'կարենան իւրան հակառակ կանգնիլ.

Հ. Հայերը Յաղկերտին հրամանը կատարեցի՞ն.

Պ. Միայն խօրհրդով մի բազմութիւն գունդ յուղարկեցին, որոց հետ գնացին մէկ տեղ ըստ բաւականին նախարարներ և քահանաներ։

Հ. Ի՞նչ արաւ Յաղկերտ այս զօրքերը.

Պ. Հոնաց վերայ պատերազմի տարաւ, և

այն տեղ վեց և կօթը տարի պատերազմի մէջ աշխատացնելից յետոյ սկսաւ ամէնին էլ կրակապաշտութեան սովորել։

Հ. Նախարարներից ո՞վ յայտնապէս թագաւորին հրամանին հակառակվելով նահատակվեց։

Պ. Գարեգին քաջ նախարարը, որ թագաւորին ասածներին հակառակելով ծաղը արեց թագաւորին և նահատակվեց։

Հ. Ուրիշ էլ ո՞յք նահատակվեցան։

Պ. Ասում Գնեունի և Սանաձինը Ուշտունի իւրանց զօրքովը, որ տեսնելով Յազկերտին անօրէն հրամանը վախել էին։ բայց Յազկերտ նոքից զօրք յուղարկեց և ամէնները սուր քաշել սրեցին։

Հ. Էյն միջոցին, որ նախարարներից ոմանք Պարսկաստան էին։ Հայաստան ի՞նչ վիճակի մէջ էր։

Պ. Յազկերտ Գնեշապուհ անունով մի քննիչ յուղարկեց, որ Հայքը շրջեն։

ԼԵՆԻՆԳՐԱԴ

ղացրեց և բաց 'ի սրանից մի թուղթ էլ գրել տուաւ Հայոց՝ ստիպելով որ կամ պատասխանը տան և կամ Պարսից կըրօնքը ընդունեն։ Յովսէփ Պաթուղիկոսը ազգին միաբան հաւանութեամբը թըղթին պատասխանը գրեց։

Հ. Յազկերտ երբ որ առաւ թղթին պատասխանը ի՞նչ արաւ։

Պ. Սատիկ բարկացաւ և հրաման գրեց որ բոլոր ազգին մեծամեծ նախարարները Պարսկաստան գնան։

Հ. Նախարարները հնազանդեցա՞ն։

Պ. Ո՛չ երբեմն կտրելով վեր կացին գնացին, որոց գլխաւորները էին Վասակ և Վարդան։

Հ. Երբ որ Նախարարները Պարսկաստան հասին՝ Յազկերտ հետերնին ի՞նչպէս վարվեց։

Պ. Իսկոյն բանտի մէջ դնել տուաւ և սկսեց ստիպել որ կամ հաւատքնին ուրանան ու իւրանց առաջի պատուոյն հատնին, և կամ մեռնին։

Հ. Նախարարները այս երկուսից ո՞րը յանձն առին.

Պ. Տեսնելով որ՝ թէ որ իւրանք մեռնին Հայաստան ոտքի տակ կ՚ընկնի, երեսանց յանձն առին և արևին երկրպագութիւն արին և շատ մոգերով Հայաստան դարձան։

Հ. Հայերը երբ որ իմացան մոգերին գալը ի՞նչ արին.

Ի. Սուրբ Ղևոնդ և ուրիշ Աստուածընտիր քահանաներ ժողովրդեան հետ միացած նոցա վերայ վազեցին և մի լաւ ջարդ տալով լեղապատառ փախցրին ըզմոգպետը իւր մոգերով։

Հ. Ի՞նչ կերպով հանդարտվեց ժողովուրդը.

Պ. Սուրբ Վարդան Յովսէփ Կաթուղիկոսին ոտքը ընկնելով մեղացը թողութիւն խնդրեց. իսկ Վարդան ստութեամբ համոզեց քահանաներին, որ առ ժամանակ Հակառակվին մոգերին, որպէս զի Յազկերտի առաջին յանցաւոր Համարվին և վերջը կամաց կամաց հալածեն։

Հ. Վասակայ այս խորհուրդը ի՞նչ հետևանք ունեցաւ.

Պ. Սախարարները տեսնելով որ կամաց կամաց կրակապաշտութիւնը հաստատվում է Հայաստանի մէջ, և Վասակը Պարսից հետ միացած չարիքներ է հաստատում Հայոց, վերան վազեցին փախցրին Պարսիկները և նրան էլ բռնեցին. բայց աւետարանին վերայ երդումն ուտելուն համար՝ 'ի նորոյ ազատեցին։

Հ. Հայերը իրանց այս նեղութիւններին մէջ ուրիշներից օգնութիւն չուզեցի՞ն.

Պ. Յունաց թագէորոս փոքր Պայսերից օգնութիւն խնդրեցին. բայց երբ որ նա մեռաւ, իւր յաջորդը Մաւրիկիանոսը չ'օգնեց։

Հ. Երբ որ Յոյսերնին կտրեցին Յոյներից՝ ի՞նչ արին.

Պ. Հարիւր հազարի չափ մարդիկ Շահապիվան քաղաքը ժողովելով երեք դունդ բաժանեցին բոլոր զօրքը.

Հ. Այս դունդերի զօրավարը ո՞յք կարգվեցին.

Պ. Պարսից դէմ կենալու գնային զօրավար կարգեց Սիրշապուհ Արծրունին, երկրորդին՝ Վարդան որ Աղուանից օգնութիւն գնաց, և երրորդ գունդը առին Վասակին Հայաստանը պահելու համար։

Հ. Վարդան Աղուանից երկրումը ի՞նչ քաջութիւն արաւ.

Պ. Պարսից զօրքերը փախցրեց, Մոգերը ջարդեց և. համարձակ քրիստոնէութիւնը պաշտել տուաւ։

Հ. Այն միջոցին որ Վարդան Աղուանից կողմերն էր, Վասակ ի՞նչ էր անում Հայաստան։

Հ. Հաւատքը ուրացած 'ի նորոյ սկսեց եկեղեցիները աւերել ու կրակապաշտութիւն մտցնել Հայաստանի մէջ։

Հ։ Յազկերտ տեսնելով Հայոց պատրաստութիւնները ի՞նչ արաւ։

Պ. Մինհրներսէհ անունով Պարսիկ հաղարապետը յուղարկեց, որ երթայ պատերազմը լուցնէ, և Վասակը նրան կողմը

անց կենալով համարձակ լինքը վերան առած պատերազմին հոգսը. ամէն չարիք անում էր։

Հ. Հայերը վերջի պատերազմին ի՞նչպէս պատրաստվեցան.

Պ. Վարդանայ հրամանաւը վաթսուն հազար հոգի ժողովեցին և պատերազմի պատրաստվեցին Արարայր գեղին մօտերքը։

Հ. Ի՞նչպէս լուացաւ վերջին պատերազմը.

Պ. Սնծն Վարդան և իւր ընկերները շատ քաջութիւններ անելից յետոյ՝ Վարդան քաջութիւնով զարկվեց ու մեռաւ, և երկու հարիւր ինսուն հոգի էլ իւր ընկերներից մեռան նոյն օրը. բաց 'ի սրանից նոյն օրերը ամբոր հաւատի և հայրենեաց վերայ մեռնողների թիւը եղև հազար երեսունը վեց հոգի (451)։

Հ. Վասակ ուրիշ ի՞նչ չարիք հացրեց Հայոց.

Պ. Ձեռքը ընկածը կա՛մ սպանումը և կա՛մ հաւատքը ուրացնել էր տալիս.

Նոյնպէս բռնեց այն պատուաւոր քա-
հանաները, որք սուրբ Ղևոնդի անու-
նովը Ղևոնդեանք ասուեցին, և շղթայա-
կապ կ'պահէր, որ վերջը Պարսկաստան
տանվելով այն տեղ նահատակվեցին։

Ա. Ասակ իւր չարութեան պատիժը ի՞նչ-
պէս զտաւ.

Պ. Յանցաւոր գտնելով Յաղկերտի առա-
ջին, որ այս ամենայն չարիքներից յե-
տոյ չ'կարողացաւ Ասակը արեւապաշտ
շինել, բանտի մէջ դրուաւ ուր որ որդ-
նալից եղեալ մեռաւ ու կորաւ։

ԴԱՍ ԺԳ.

Աստուծոյ և Աստվածատուր և Աստիանոսաց
սրբոց պատերազմները։

Ա. Ասակին տեղը ո՞վ դրուաւ մարզպան.

Պ. Աստրումիզդ, որ ո՛չ սակաւ քահանայ-

ներ բռնից և շղթայներով կապից։

Հ. Աղրոմկղայ ժամանակը քրիստոնէութիւնը ի՞նչ վիճակի մէջ էր.

Պ. Նրանց հրաման տուաւ, որ ամէնքը իւրանց հաւատը պաշտեն, թէպէտև կրօնաւորները պակաս չէին։ Այս անելով սկսեց նախարարները ատելել, որ երթան Յոզկերտին մօտ առանց երկիւղի, երդուելով, որ նոցա մի վատնգ չի լինիլ.

Հ. Նախարարները երբ որ Պարսկաստան հասին՝ Յազկերտ ի՞նչ կերպով ընդունեց նրանց.

Պ. Խսկոյն բանտ դնել տուաւ, և սկսեց նրանց ատելել որ հաւատին ուրանան. բայց ո՛չ մէկն էլ հաւատից չի թողաց։

Հ. Նախարարները ո՞րչափ ժամանակ բանտի մէջ մնացին.

Պ. Երկար ժամանակ բանտումը կենալից և շատ տանջանքներ քաշելից յետոյ Շղոմշապուհ անունով իշխանին աղաչանքովը ազատվեցին բանտից և պարսկաստան կ'կենային։

Հ. Դեռ ոչչափ ժամանակ էլ Պարսկաստան կացին նախարարները.

Պ. Ութը տարի կենալից յետոյ երբ որ Աստիշնասպ մարզպան էր գալիս Հայաստան, իւրանք էլ մէկ տեղ եկին (464)։

Հ. Ո՞վ էր մեծն Վահան.

Պ. Մեծին Վարդանայ Հմայեակ եղբօրը մեծ որդին էր։

Հ. Ի՞նչպէս համար Վահան հաւատը ուրացաւ.

Պ. Վան զի իւր անթիւ կատարելութիւններովը ամէնին սիրելի էր. ուստի Պարսկաստան գտնուող ուրացեալ նախարարները վերան նախանձելով նրանից ամբաստանեցին Պերոզին. Վահան էլ նորան աչքիցը չընկնելու համար հաւատը ուրացաւ.

Հ. Վահան ի՞նչպէս քրիստոնէութիւնն հաւատը դարձաւ վերստին.

Պ. Լսելով որ Վրաց Վախթանկ թագաւորը Պարսիկներից ապստամբել է. իւր հետ էլած Հային էլ յորդորից, որ

նրանք էլ ապստամբվին, և կրկին քրիստոնէութեան համար պատերազմին։

Հ. Վահանայ արած առաջարկութիւնը յանձն առի՞ն.

Պ. Հաւատքը յանձն առին և Վահանը տպարարաց դրին՝ և Սահակ Բագրատունին էլ մարզպան Ատրշնասպայ անունը՝ զոր պատերազմի մէջ սպանել էին (481).

Հ. Վահան երբ որ ուրիշ նախարարներէ էլ էմացրեց իւր ապստամբվիլը ի՞նչ արին նորանք.

Պ. Փոխանակ օգնելոյ՝ ուրիշ զնացողներին արդելք եղեն և ետևներիցը վազելով խափանեցին. բայց քանի մի հոգի իւրան հետ միաբան կացին։

Հ. Պերոզ երբ որ լսեց Վահանայ ապստամբվիլը ի՞նչ արաւ.

Պ. Ատրներսէհի ձեռքովը շատ զօրք յուղարկեց ապստամբելով որ Վահանը ողջ բռնեն։

Հ. Վահան Ատրներսէհին դէմ քանի՞ հոգւով գնաց.

Պ. Խիստ քիչ հոգւով, Վահան Մանդակունին էլ հետը առած. նորա համար քաջութեան հետ Աստուածային զօրութիւնը և հաւատքը օգնական առած՝ մեծ ջարդ տուաւ թշնամեաց բանակին։

Հ. Ո՞վ յուղարարից կրկին Վահանայ դէմ.

Պ. Սիհրանը Հայոց, և Վախթանկ Վրաց թագաւորին դէմ։

Հ. Վահան ի՞նչու համար Վրասան գնաց.

Պ. Վասն զի Վախթանկ օգնութիւն էր ուզել Հայերից Պարսից դէմ կենալու, Վահան էլ գնաց իւր խոսամանը հակառակ չէ լինելոյ համար։

Հ. Վախթանկ ի՞նչ խաղդախութիւն արաւ Վահանայ.

Պ. Սիհրանայ հետ խօսքը մէկ անելով Վահանին դէս ու դէն անելով յետ քաշեց այն տեղերը, մինչև որ Սիհրան իւր անթիւ զօրքերովը հասաւ և Վա-

հանը յանկածակի գալով՝ չ'կարողացաւ պատրաստվիլ, որով և յաղթվեց։

Հ. Ի՞նչ երեւելի մարդիկ մեռան այս պատերազմիս մէջ.

Պ. Սահակ Բակրատունին և Վասակ Վահանայ եղբայրը. իսկ մնացածներից շատը Միհրանայ կողմը անցին և մնաց հարիւր հոգի, որ Տայոց կողմերը փախան։

Հ. Միհրանին տեղ ո՞վ սպարապետ դրուեցաւ.

Պ. Զարմիհր Հաղարաւուխտ, որ նոյնպէս չ'կարողացաւ Վահանայ անպարտելի արութեանը յաղթել։

Հ. Վահան Հաղարաւուխտին ձեռքից ի՞նչպէս ազատվեց,

Պ. Հաղարաւուխտ իմանալով որ Վահանը Դուին է փախել, գնաց Դուինը պաշարեց. Վահան չ'ուզելով, որ իւր պատճառաւը քաղաքին մի վնաս հասնի իւրան քիչ մարդիկներովը դուրս եկաւ քաղաքից և զՊարսիկները ճեղքելով գնաց Հաղատիմ գաւառը.

Հ. Հապարաւուխտին տեղը ո՞վ յուզարկեցին.

Պ. Հ. Սիհրանեան Պարսիկը, որ իմանալով. Վահանայ որ տեղ լինելը, եկաւ պաշարեց։

Հ. Վահան ի՞նչ կերպով ազատվեց Հապուհին ձեռքից.

Պ. Ո՛չ սակաւ դեղացւոց ձեռքը Վահաններ՝ և բահեր տալով իւր կացած տեղը շարեց և ինքը ուրիշ ճանապարհով Պարսից վերայ վազեց դիշերը, և խռովութիւն քցելով Պարսից բանակին մէջ վեց հարիւր հոգւոյ չափ մեռցրեց ու մնացածներն էլ փախան։

Հ. Վահան ուրիշ ի՞նչ քաջութիւններ արած ունի.

Պ. Մի անգամ երեսուն հոգւով Հապուհին դէմ ուրիշ մեծամեծ յաղթութիւն էլ արաւ, նոյնպէս յանկարծակի նրանց վերան վազելով՝ երբ որ նրանք անվոյթ էին Վահանին զօրացը քիչութիւն տեսնելով։

Հ. Պարսիկք ի՞նչ կերպով Վահանայ հետ հաշտուեցին.

Պ. Երբ որ Պերոզ մեռաւ և իւր եղբայրը Վաղարշը թագաւորեց, սա լսած լինելով Վահանայ քաջութիւնները և նորա արդար պահանջմունքը, ուզեց հաշտվիլ հետը. ուստի Սեխոր անուանով խաղաղասէր մարդը յուղարկեց, որ երթայ այս բանս կատարէ։

Հ. Ի՞նչ կերպով կատարվեց այս հաշտութիւնը.

Պ. Վահան դաշինք դրաւ Սեխորայ հետ. որոց գլխաւորն էր, թէ քրիստոնէութիւնը ազատ պաշտուի Հայաստանի մէջ և Պարսիկք բնաւ չ'խառնվին, Սեխոր յանձն առաւ. այն ժամանակ Վահան դնաց Պարսից դուռը և դարձեալ երդում առաւ թագաւորից, և ընդհանուր ապարատես կարգվելով դարձաւ Հայաստան։

Հ. Ի՞նչպէս մարդասէր եղև Վահան.

Պ. Երբ որ Ենդիկան մարդասանը Պարսկաս-

ասան դարձաւ անչափ զովից Վահանը որ Վաղարշ էլ նրան մարզպան դրաւ, և Վահանին Վարդ եղբայրը էլ սպարապետ։

Ա. Ի՞նչու համար վերջը 'ի նորոյ Վահանին տեղը Պարսիկ մարզպան դրուաւ։

Պ. Երբ որ Վաղարշ մեռաւ, Պերոզին որդի Կաւատը թագաւորեց, սա էլ մոգերից յորդորված Վահանայ տեղ մի Պարսիկ մարզպան յուղարկեց և հետը էլ 2ատ քուրմեր։ սորանով վերատին խռովութիւն ընկաւ 'ի Հայաստան։

Բ. Հայերը ընդունեցին նոր մարզպանը և քուրմերը։

Գ. Վահան ուրիշ նախարարների հետ միաբանելով վազեց նոր մարզպանին վերայ և փախցրեց Հայաստանից։

Դ. Վահան ոչչափ ժամանակ մարզպանութիւն արաւ։

13 0 h

Պ. Քսանը վեց տարի ամենայն դժվարի հանդամանքների մեջ (491)։

ԴԱՍ ԺԴ.

Վարդից Ղեռնը Սիրաստի Աբ-ջատաղաղու-ն-ը։

Հ. Վահանին տեղը ո՞վ դրուեց մարդ-ապան։

Պ. Վարդ՝ Վահանին փոքր եղբայրը, որ չորս տարուց յետոյ մարդպանութիւնից ընկաւ, վերան տուտ ամբաստանութիւն-ներ անելուն համար։

Հ. Վարդին տեղը ո՞վ դրուեց։

Պ. Բուրզան անունով անպիտան Պարսիկը, որ երեք տարի Հայերին շատ նեղեց։

Հ. Ի՞նչ մարդ էր Սիսաք Գնունին։

Պ. Սի քաջ մարդ էր, որ երբ որ Հոնք Հայաստանի վերայ աւերմունքներ

կանէին, առաջնին դուրս գալով յաղթեց նորանց և փախցրեց Հայաստանից։

Հ. Ովեմ իւրան այս արդեանցը համար ի՞նչ փոխարէն ընդունեց Կաւատ թագաւորից։

Պ. Բուրղանին տեղը մարզպան կարգվեց, որ երեսուն տարի մարզպանութիւն արաւ։

Հ. Ովեմին տեղը ո՞յք մարզպան գլուխցին։

Պ. Դենշապուհ Պարսիկը, որ Հայերին շատ կենեղէր հաւատոյ համար, որ և Ովսէս Կաթուղիկոսին աղաչանքովը փոխուեց և տեղը ուրիշ մէկը եկաւ. վերջը յուղարկվեց Սուրէն Ռ՚ինը, որ Հայերին շատ նեղեց։

Հ. Այս միջոցներումն ի՞նչ նշանաւոր փոփոխութեան բան եղև Հայաստանի մէջ.

Պ. Ովսէս Կաթուղիկոսը Հայոց Տօմարը նորոգելով նոր թուական հաստատեց, և նրանից սկսեալ մինչև հիմայ 1314 տարի է։

Ա. Սուրէն մարզպանը ի՞նչպէս սպանվեց։

Պ. Սուրէն՝ Վարդան Մամիկոնեանին Մանուէլ եղբայրը սպանեց։ Վարդան այս բանիս վերայ բարկացած՝ զօրք ժողովեց գնաց Դուին քաղաքին վերայ և քաղաքը առնելով Սուրենին սպանեց և զօրքն էլ Ջարդեց և ցրուեց (564)։

Ա. Երբ որ Վարդանայ այս արած գործքը հասաւ Խոսրով Պարսից թագաւորին ականջը, ի՞նչ արաւ Խոսրով։

Պ. Շատ զօրք յուղարկեց Վարդանայ վերայ։ բայց Վարդան վարպետութեամբ պատերազմելով յաղթեց նորանց և ցրուեց։

Ա. Երբ որ Խոսրով աւելի մի մեծ բանակ յուղարկեց Վարդան ի՞նչ արաւ։

Պ. Տեսանելով որ իւր մօտ եղեալ մարդկանցից շատերն յանկարծ բաժանվեցան, ինքն էլ Սամսոլ գնաց և Յուստինիանոս Կայսրից օգնութիւն ուզեց։ Յուստինիանոսն էլ տուաւ։

Ա. Վարդան Յունաց օգնութեամբը կարողացաւ Պարսից յաղթել։

Պ. Խոսրով ինքը անձամբ հարիւր քառասուն հազար զօրքով Ադրդանայ և Յունաց վերայ եկաւ. և երկու կողմից էլ շատ կոտորված լինելուց յետոյ, դարձեալ Պարսից ձեռքին մնաց Հայաստան։

Հ. Յայնժամ ո՞վ կարգվեց մարզպան Հայաստան.

Պ. Ահա՛ Ադոն խաղաղասէր Պարսիկը տասնը հինգ տարի։ Սա վերջին Պարսիկ մարզպանը եղև (578)։

Հ. Ահա՛ Ադոնին տեղը ո՞վ եղև մարզպան.

Պ. Սմբատ բազմայաղթ իւր քաջութիւններին համար, որ և ութը տարի մարզպանութիւն արաւ։

Հ. Սրան ո՞վ յաջորդեց։

Պ. Դաւիթ Սահառունի, որ քսանը չորս տարի մարզպանութիւն անելից յետոյ, վախենալով Պարսիկներից թողեց իշխանութիւնը և Կոստանդինուպօլիս փախաւ։

Հ. Դաւիթ Սահառունուն ժամանակը ի՞նչ յիշատակի արժանի դործողութիւն եղև Հայաստանի մէջ.

Պ. Մուշեղ Մամիկոնեան իշխանին և դայլ Վահանին Պարսից հետ արած պատերազմները։

Հ. Ի՞նչ պատճառաւ եղև այս պատերազմները.

Պ. Խոսրով մի պատճառաւ թշնամանալով Մուշեղայ հետ, պատերազմի դուրս եկաւ վերան. Մուշեղ էլ ինքեան օգնութիւն կանչեց Վահան իւր ազգականը, որ իւր վարպետութիւններին համար դայլ Վահան ասուեց։

Հ. Դայլ Վահանին քաջութեանցը և վարպետութեանցը ո՞վ հեռևող եղև։

Պ. Իւր որդին Սմբատը, որ Պարսից շատ անդամ յաղթեց ու չորս երևելի զօրավարներ սպանեց։

Հ. Դաւիթ Սահառունուն տեղը ո՞վ մարդպան դրուեց.

Պ. Վարազտիրոց Սմբատ բազմայաղթին

որդին որ եօթը տարի մարգպանութիւն անելից յետոյ իւր ընտանիքովը Սամաս պօլ փախաւ։

Հ. Ո՞վ եղև առաջին Պէրատպաղատը։

Պ. Դաւիթ Սահառունին։

Հ. Ի՞նչպէս եղև որ Դաւիթ Պէրատպաղատ յուղարկվեցաւ։

Պ. Այս միջոցներուն Պարսից մէջ խռովութիւն ընկնելով, Հայերը Յոյներին ապաւինեցին և նրանցից մի իշխան ուզեցին։ Նրանք էլ Դաւիթը յուղարկեցին Պէրատպաղատ անուանելով, որ մի տեսակ իշխանութեան անուն է։ Բայց ջոր տարուց յետոյ նորից Հայերը դուրս արին զ՝Դաւիթը։

Հ. Դաց 'ի Պարսիկներից ուրիշ ի՞նչ թշնամի սկսաւ վազել Հայաստանի վերայ այս միջոցներումը։

Պ. Ազարացիք՝ որ Պարսիկներից աւելի շատ չարիք հասցրին Հայոց։

Հ։ Նախարարներ եղի՞ն՝ որ Ազարացւոց արշաւանացը ընդդէմ դուրս գան։

Պ. Թէոդորոս Ոշտունի և Վահան Կամսարական ուխտը հաղար զօրքով (676)։

Հ. Վահանին այսպիսի ազգասիրական գործողութեանը ոյք արդեօք եղեն,

Պ. Նրբ որ Հաղարացւոց դէմ պատերազմի էր դուրս եկել, Սահուռ անձևացին և ուրիշները Հաղարացւոց կողմը անցնելով սկսան տաճիկներին հետ մէկ տեղ Հայերին ջարդել և այսպէս ցըրուեցին Վահանայ զօրքերը։

Հ. Հաղարացիք Վահանայ զօրքը ջարդելից յետոյ ի՞նչ արին.

Պ. Հաս մարդ ուր քաշելից յետոյ, երեսուն հինգ հաղար հոգի էլ գերի տարին։

Հ. Հաղարացւոց այս կոտորածից յետոյ ո՞վ յուզարկվեց Վիրապաղատ Յունաց կողմից.

Պ. Վարազատիրոց, որ մի տարից յետոյ մեռաւ և նրան յաջորդեց իւր տղայ Սմբատը։

ԴԱՍ ԺԵ.

Սիքար Ալ-բաղդադցոյ մինչև Բաղբա-դոնէացոյ ընդհատումն կանգնոյ։

Ա. Սմբատին Կիւրապաղատութեան ժամանակը Այերը հանդիստ անցուցին։

Գ. Սմբատին Կիւրապաղատութեան երկրորդ տարին Ադարացիք վազեցին Այաստանի վերայ և շատ կոտորածներ արին։ Նախարարները միաբան հնազանդվեցին Ադարացւոց և Յունաց իշխանութենից դուրս եկին, որ նորա վերայ Այները շատ նեղացան (653)։

Ա. Սմբատին տեղը ո՞վ եղև իշխան։

Գ. Համազասպ Մամիկոնեան, որ մի քիչ ժամանակից յետոյ վերատին Յունաց հնազանդելով նրանցից Պատրիկ ասուած իշխանութիւնը առաւ։ Ամիրապետը բոլոր իւր մօտ եղեալ Այ պատանդները ուր քաշել տուաւ։ Նորա յաջորդին Լ

նորոյ հնազանդեցին Հայերը, և քիչ ժամանակից յետոյ Համազասպ էլ մեռա-նելով՝ իւր տեղը Պատրիկ դրուեց իւր եղբայր Գրիգորը։

Հ. Գրիգոր ո՞րչափ ժամանակ Պատրիկ եղև և նրա ո՞վ. յաջորդեց.

Պ. Հսանը չորս տարի, և վերջը պատերազմի մէջ մեռաւ։ Երկու տարի տակն ուր վերայ եղև Հայաստան, մինչև որ Աշոտ Բագրատունին զօրանալով՝ թշնամեաց ընդդիմացաւ Հաղարացւոց հարկ տալով։

Հ. Աշոտ ո՞րչափ ժամանակ պատերկուրթիւն արաւ.

Պ. Յոյները իմանալով, որ Հայերը Հաղարացւոց հարկատուն էլէլ, շատ զօրք յուղարկելով մեծամեծ աւերմունքներ արին Հայաստանումը, Հաղարացիք էլ ընդ հակառակը կարծելով որ Հայերը Յունաց հնազանդվել են, իւրանք էլ Նոյնպէս շատ ճեւաններ հասցրին Հայոց. Աշոտ տրանց ընդդիմացաւ քա-

Զուլթեամբ, թայց ինքն վերաւորվելով մեռաւ երեք տարի իշխելից յետոյ (692)։

Ա. Ընշոտին մեռնելից յետոյ ո՞վ իշխեց Ֆայոց։

Պ. Ֆազարացիք, որ Բրիատոսի թուականին սկսան մի Ֆազարացի իշխան յուղարկել ոտիկան կոչմամբ։ որոց առաջինը եղև Ընդլա։ 693

Բ. Ընդլայի առաջի գործողութիւնը ո՞րն եղև։

Պ. Սախարարները և Սահակ Կաթուղիկոսը բռնեց ու Դամասկոս յուղարկեց։ Բէչ մի ժամանակից յետոյ Սմբատ Բիւրատեանը փախցրեց նրան Ֆայատանից Յունաց օգնութեամբ։

Բ. Ֆազարացիք Սմբատայ այս արած գործողութեան վրէժը ի՞նչպէս հանեցին։

Պ. Սոհմատ անունով զօրավարը յուղարկեցին, որ շատ վնաս հասցրեց, և վերջը Սահակ Կաթուղիկոսին աղաչանաց թողթով խաղաղութիւն արաւ և գերիները աղատեց։

Հ. Ներսեսարներին ազատելից յետոյ Պաշմ Ասիկանը ի՞նչ չարիք հասցրեց Հայոց։

Պ. Ներսեսարները և ուրիշ ազգին մեծերը Նախջուանի եկեղեցւոյն մէջը այրել տուաւ (704)։

Հ. Պաշմին տեղը ո՞յք դրուեցին Ասիկան։

Պ. Վ՚ելթ ու Մահմէտ, որ շատ չարիք հասցրին։ և Աբդլազիզ որ քաղցրութեամբ խնամեց ազգը։

Հ. Որոնց տեղն էլ ո՞յք դրուեցին Ասիկան։

Պ. Մրուան, որ երկու տարուց յետոյ Աշոտին պատրիկ դնելով ինքը դնաց Միրապետ եղև, բայց երբ որ Մրուան մեռաւ, Աշոտին տեղը Նզիտ անունով չար մարդը Ասիկան դրուեց, որ Հայերին շատ նեղեց (758)։

Հ. Նզիտին տեղը ո՞վ իշխեց Հայոց։

Պ. Սմբատ Բագրատունի բարեպաշտ մարդը Պատրիկ կարգվեց, որոյ վեցերորդ տարումը Սուլէյմանը Ասիկան յուղար-

վեց, մին քիչ ժամանակից յետոյ եկաւ Պէքիր անողորմ մարդը, և վերջն էլ Հասան, որ ամէնից աւելի նեղեց Հայերին։

Հ. Հասանին ժամանակը Հայերը ի՞նչ գործողութիւն արին։

Պ. Մուշեղ Մամիկոնեան իշխանը Հասանին զօրքերը լաւ ջարդեց ու իւրան էլ Դուին քաղաքիցը փախցրեց. Սոյնպէս նա և Աշոտ մակեր իշխանը մի քանի անգամ յաղթեց Հագարացւոց մինչև որ Նգլտ Ռ. շատ զօրքով դարձեալ նուաճեց Հայերին և շատ չարիք հասցրեց, որ նրան նմանը չէր էլած Հայաստանի մէջ (787)։

Հ. Նգլտից յետոյ Հայերը ի՞նչ վիճակ ունեցան.

Պ. Մի քիչ հանգստացան, որովհետև որ Խուզիմայ և Հոլ Ոստիկանները որ հետզհետէ նստեցան այնչափ չնեղեցին Հայերին։

Հ. Հոլին տեղը ո՞վ իշխեց Հայոց.

Պ. Նախարարաց աղաչանքովը Բագրատ Բագրատունին, որ վերջը տէրութեան առաջին յանցաւոր գտնուելով աչքից ընկաւ.

Հ. Բագրատին տեղը ո՞վ յուղարկվեց Ասոտիկան.

Պ. Ապուսէթ, որ Բագրատը բռնեց ու Դամասկոս յուղարկեց, այս բանիս բարկացան Սասունցիք՝ Ապուսէթին վերայ վազեցին ու սպանեցին (849)։

Հ. Ամիրապետը երբ որ լսեց Ապուսէթին սպանուելը ի՞նչ արաւ.

Պ. Ռուզայ Ասոտիկանը յուղարկեց հրաման տալով որ ձեռքիցը եկած չարիքը հասցնէ Հայոց, որ բոլոր Հայաստանը աւերեալ արաւ.

Հ. Նախարարներից մի մարդ չեղև որ Ռուզային ընդդիմանայ.

Պ. Հաստ Երծրունին կուզէր ընդդիմանալ, բայց տեսնելով որ ուրիշ նախարարները չեն օգնում ինքն էլ շատ ընծաներով գնաց Ռուզային սիրտը առնելու,

բայց փոխանակ պատիւ ընդունելոյ տնով տեղով զերի դնաց։

Հ. Սախարարներից ո՞վ եղև որ Բուղային առաջնորդից որպէս զի ինքն պատուոյ հասնի։

Պ. Սմբատ Սպարապետը, բայց Բուղա ամէն չարութիւն անելից յետոյ փոխանակ պատուոյ հասցնելոյ շղթայով կապեց ու Պաղատատ զերի տարաւ։ Նրա տեղը Հ՚եղի անունով Պարսիկը Ատիկան դնելով։

Հ. Սախարարները և ուրիշ զերիները այն տեղ ի՞նչ եղին։

Պ. Ամիրապետին բռնութիւններից ոմանք հաւատնին ուրացան և շատն էլ նահատակվեցին։ Սմբատ էլ մեղացը վերայ զղջալով՝ բանտին մէջը մեռաւ ու խոստովանող ասուեց (856)։

Հ. Այդոց այսչափ թշուառութեանց պատճառը ո՞յք եղին։

Պ. Ուրչափ Յոյները և Պարսիկները կամ Ազարացիք, նոյնչափ էլ էն ժամա-

նակվան մեր ազգին նախանձու, ատելութեան, անմիաբանութեան և որ մեծն է անկրթութեան և անճնասիրութեան զօրացած ախտերը։ Սրանից ամէն կրթեալ ազգերը խորշել են, ինչպէս նաև մեր ազգն էլ իւր կրթութեան ժամանակը։

ՄԱՍ Երրորդ,

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՌԱԳՐԱՏՈՒՆԵՆՑ

ԴԱՍ ԺԱՌ,

Աշոտ Ա. և Սմբատ Ա.

Հ. Բագրատունեաց իշխանութեան առաջին թագաւորը ո՞վ եղև.

Պ. Աշոտ՝ Սմբատ խոստովանողին որդին։

Հ. Ի՞նչ կերպով Աշոտ այս իշխանութեան հասաւ.

Պ. Հելենին ոստիկանութեան ժամանակը Հայաստանի վերայ հոգ տանելով և Հաղբատցւոց հաւատարմութիւն ցոյց տալով, Հելենին տեղը վերակացու եղև Հայաստանի (859)։

Հ. Ի՞նչպէս թագաւոր եղև Աշոտ.

Պ. Հսախարարները Դէորգ Կաթուղիկոսին

հետ միաբանած Ամիրապետից խնդրեցին որ իւրանց թագաւոր դնէ Աշոտին, խոստանալով որ հաւատարիմ կ'լինեան։ Ամիրապետը Աշոտին լաւութիւնը լսած լինելով՝ կատարեց խնդիրները։

Ա. Աշոտ ի՞նչ պատիւ գտաւ Լեւոն Պայասերից, և ի՞նչպէս մեռաւ։

Պ. Այսուհանդերձ ամէն կողմերը խաղաղացնելից յետոյ Ստամբօլ գնաց Լեւոն Պայասեր յարգութեան համար, ուր և մեծամեծ պատիւներ գտաւ, վերջը Այսուհան դառնալոյ ժամանակը Երկրակ հասնելով ծանր հիւանդացաւ, ու ամէն հոգևորական պատրաստութիւններ անելով մեռաւ 71 տարեկան, 26 տարի իշխելից ու հինգ տարի թագաւորելից յետոյ։

Ա. Ամբաստ երբ որ հօրը տեղը անցաւ, ո՞վ եղև որ թագաւորութեան աչք ձգէ։

Պ. Աբաս իւր հօր եղբայրը շատ զօրք ժողոված կ'ուզէր ինքն թագաւորվիլ։ բայց երկու անգամ յաղթվեց։ Ամբաստ Աբաս-

սին տեղը սպարապետ դրաւ իւր Հ-
պուհ եղբայրը։

Զ. Սմբատ Աբասին նուաճելէց յետոյ ու-
րիշ ի՞նչ թշնամի ունեցաւ.

Պ։ Աւիշին Պարսից Ոստիկանը նախանձե-
լով Սմբատայ մեծանալուն վերայ երե-
սուն հազար զօրքով վերան պատերազմի
դուրս եկաւ. Սմբատ քաղցրութեամբ
Աւիշինին սիրտը առաւ, ու հաշտվեց
հետը։

Զ. Աւիշին ո՞րչափ ժամանակ հաստատուն
մնաց իւր դաշինքին վերայ.

Պ. Խիստ քիչ, վասն զի դղջալով արած
հաշտութեանը վերայ խաբէութեամբ
Սմբատայ վերայ վազեց ու առաջի ան-
գամ շատ չարիք հասցրեց. Սմբատ շատ
զօրք ժողվեց և փախցրեց Աւիշինը։

Զ. Սմբատ Աւիշինին յաղթելէց յետոյ ի՞նչ
թշնամի ունեցաւ.

Պ. Ահմատ միջագետաց Ոստիկանը, որ
նորա հետ միացաւ նա՛և Պատրիկ
Աւծրունին Սմբատայ ազգականներից

մէկը՝ ու Ը.հմատին առաջնորդ եղև. Սմբատ թէպէտև յանկարծ յանպատրաստից եկաւ. բայց քաջութեամբ պատերազմելով յաղթեց Ը.հմատին և փախցրեց իւր տեղը։

Ա. Սմբատ Ը.հմատին էլ յաղթելից յետոյ հանգիստ մնաց.

Պ. Ա՛չ. վասն զի Ը.փշին 'ի նորոյ պատերազմի դուրս եկաւ վերան և Սմբատ էլ անօգնական մնալով՝ պատանդ տուաւ իւր որդին։ Բայց Ը.փշին երբ որ ուրիշ չարիք էլ կ'ուզէր հասցնել, ինքն սոսկալի մահուամբ մեռաւ, նորա տեղը յաջորդեց Յուսուֆ իւր եղբայրը։

Ա. Սմբատ Ասիականներին բռնութիւնից ազատելոյ համար ինչ ճար գտաւ.

Պ. Ամիրապետից խնդրեց որ փոխանակ տուրքերը Ասիականների ձեռքովը տալոյ ուղղակի Ամիրապետին ուղարկի ինքը։

Ա. Ի՞նչու համար Ատրներսէհ Վրաց թագաւորը և նախարարները Սմբատայ դէմ դուրս եկին.

Պ. Նգերացւոց Կոստանդին թագաւորը ապըստամբվել էր Սմբատից. Սմբատ էլ Ատրներսէհին հետ մէկ տեղ վերան պատերազմի դուրս եկաւ, և նրան Ատրներսէհի ձեռքովը բռնել տալով Անի քաղաքի ամրոցումը դրաւ. չորս ամսից յետոյ վերան գթալով՝ բանտից հանեց և արձակեց յիւր տէրութիւնը։ Այս բանս նախարարները իւրանց նախատինք համարելով ապստամբվեցին։

Հ. Նախարարներին ապստամբութիւնը ի՞նչ վերջ ունեցաւ.

Պ. Ուրաճ գաղանի չարիքը կամ դարանադործութիւնները ունայն դուրս գալով չարաչար յաղթուեցին. Սմբատ նախարարներին շատին աչքը կուրացրեց, և Ատրներսէհին վերայ գթալով ազատեց։

Հ. Սմբատ նախարարներին յաղթելից յետոյ, ի՞նչ նոր խռովութիւն ընկաւ Հայաստանի մէջ։

Պ. Դաւիթ Ուրծրունի Սմբատայ քեռորդին

ապստամբելով նրանից, գնաց Յուսուփին մօտը, Յուսուփ էլ որպէս զի Հայաստանի մէջ խռովութիւն ձգէ, նրան թագաւոր դրաւ (908)։

Հ. Դաղկայ թագաւորութիւնից ի՞նչ էր հետևանքներ դուրս եկին.

Պ. Դաղիկ և Յուսուփ միացած վազեցին Սմբատայ վերայ, որոյ կողմը անցին նա՛և նախարարներից շատը. Սմբատ էլ տեսնելով որ մինակ ընդդիմանալ չէ կարող Դուզարացւոց երկիրը փախաւ։

Հ։ Սմբատ Դուզարացւոց մօտից ո՞ւր գնաց քաշվեցաւ.

Պ. Նրբ որ տեսաւ որ իւր Աշոտ և Սուշէղ որդիքն էլ յաղթուեցին և որդիներին մատնութեամբը, ինքն էլ յուսահատած Կապոյտ ամուր բերդը գնաց քաշուեցաւ։

Հ. Յուսուփ ի՞նչպէս առաւ Կապոյտ բերդը.

Պ. Սմբատ տեսնելով որ իւր պատճառաւը սասաիկ կոտրածք է լինում, անձնատուր եղև Յուսուփին՝ երդումն առնելով որ իւր անձին վնաս չ՚հասցնէ։

Հ. Յուսուփ Սմբատը ի՞նչ արաւ.

Պ. Նախ երևանց պատիւ ցոյց տուաւ ու նա՛և ազատ էլ թողեց, բայց վերջը 'ի նորից խարդախութեամբ կանչելով սկսաւ տանջել և չարչարել, որ կա՛մ հաւատքը ուրանայ և կա՛մ մեռնի. սոսկալի տանջանքներ տալից վերջը մորթել ու գլուխն էլ կտրել տուաւ՝ տասնը չորս տարի թշուառութեամբ թագաւորելից յետոյ (913).

ԴԱՍ. ԺԷ.

Աշոտ Բ. Նրկատը և Աբբաս.

Հ. Սմբատին մեռնելից յետոյ Հայոց վիճակը ի՞նչպէս եղև.

Պ. Երինջակ ամուր բերդը առնելով Յուսուփ, բնակիչներին մեծ մասը ջարդեց և շատն էլ գերի տարաւ. ու այս բանով բոլոր Հայաստանի տիրելով պա-

հապաններ թողեց ու ինքը պարսկաստան դնաց։

Հ. Երբ որ լսեց Աշոտ Սմբատայ տղան իւր հօրը մեռնիլը ի՞նչ արաւ։

Պ. Ալ՝ ից հարիւր հոգւոյ չափ մարդիկ ժողովելով, վազեց Յուսուփին թողած պահապաններին վերայ և սաստիկ ջարդ տալով ամէնն էլ փախցրեց։

Հ. Հայերը Աշոտ Երկաթին քաջութիւնները տեսնելով ի՞նչ արին։

Պ. Միաբանեցան ու նրան թագաւոր դրին, բայց մի փոքր ժամանակից յետոյ նախարարներից ոմանք վերան նախանձելով, ապստամբեցան նրանից և 'ի նորոյ խռովեցին աշխարհքը։ Այս բանը տեսնելով Յուսուփ՝ ինքն էլ շատ չարիք հասցրեց Հայոց։

Հ. Հայոց այս թշուառութիւններին մէջ չ'եղև մէկը որ ողորմի և խաղաղացնել ջանայ։

Պ. Կոստանդին Պերիտուժէն Յունաց Կայսրը լսելով Հայոց խեղճութիւնները

Աշուրը Սատանայի կանչից, և շատ պատուելից յետոյ՝ Յունաց զօրքով դէպ 'ի իւր թագաւորութիւնը դարձրեց զինքը (921)։

Զ. Աշուտ այսպիսի փառքով Այաստանն դառնալից յետոյ կարողացաւ խաղաղ թագաւորել։

Զ. Ամ. վասն զի Յուսուփ Աշուտ Երիկաթին հօր եղբօրը տղան Աշուտը՝ թագաւորացրեց, որ բռնաւոր ասուեցաւ։ Եւ այսպէս 'ի նոյոյ խռովութիւն ընկաւ Այոց մէջ, և սաստիկ ջարդեր եղեն երկու կողմից էլ մինչև որ Յովհաննէս Կաթուղիկոսը հաշտացրեց նրանց։

Զ. Աշուտ Երիկաթ բաց 'ի Աշուտ բռնաւորից ուրիշ ի՞նչ թշնամիներ ունեցաւ։

Զ. Անկրթութեան և անկարգութեան հոգի մտած լինելով, ամէնքը կ'ուզէին ինքն իշխան թագաւոր լինել մինչև նա՝ Աբբաս՝ Աշուտի եղբայրն էլ ապստամբեցաւ, և պատերազմներ արաւ եղբօրը

հետ. Աշոտ էլ յուսահատած դնաց Սևան կղզին քաշուեցաւ հարիւր հուսով։

Դ. Աշոտ Սևան կղզին քաշուելից առաջ ի՞նչ քաջութիւն արաւ Յելիկ Ամրամին ընդդէմ։

Պ. Երբ որ մի օր Աշոտ զուարճութեան համար Ուռեցւոց կողմը էր գնացել, ելիով նրանց իշխան Յելիկ Ամրամին ապստամբութիւնը Նգեբացւոց թագաւորից մի փոքր զօրք օգնութիւն առաւ, ու գնաց մի ամուր բերդի մէջ պահուեցաւ Ամրամ եկաւ պաշարեց նրան. Աշոտին մօտի մարդիկը տեսնելով որ պբրծում չկայ, մէջերնին որոշեցին որ Աշոտը բռնեն Ամրամին մատնեն ու իւրանք ազատվին. Աշոտ իմանալով նորանց չարութիւնը՝ դիշերանց ձի նստաւ ու թքշնամեաց միջից քաջութեամբ անցնելով փախաւ Սևան կղզին գնաց. սրան նման շատ քաջութիւններ արաւ Աշոտ։

Դ. Երբ որ Աշոտ Սևան կղզին էր քա-

շուրջ, Հայաստան ի՞նչ վիճակի մէջ էր.

Պ. Յուսուի Նաւէ անունով մի վերակացու յուղարկեց որ շատ չարիք հացըրից Հայոց իւրանց անմիաբանութեանը ցաւելի և արժանաւոր պատիժ։

Հ. Աշտ Նրկաթ ի՞նչպէս յաղթեց Բշբը Ասիկանին.

Պ. Նրան տեղը Բշբը յուղարկվեց. սա իմանալով որ Աշտ Սկան կղզին է քաշուել՝ ուզեց բռնել. բայց Աշտ իւրան քիչուոր մարդիկը ուրիշ ուրիշ նաւակներու մէջ բաժանելով նետաձգութեամբ շատ մարդ սպանեց, որով թշնամիները սկսան փախչիլ. ինքը էլ նոանից ընկնելով հալածեց ու դարձաւ իւր տեղը։

Հ. Աշտ մինչև երբ Սկան կղզին քաշուած մնաց.

Պ. Տեսանելով որ կամաց կամաց խաղաղացաւ Հայաստան, ինքն նկաւ իւր թագաւորութիւնը և հաշտութիւն արաւ Էրաս եղբօրը հետ. և քսանը չորս տա-

ին ընդհատ ու անհանգիստ թագաւորու-
ից հետոյ մեռաւ, սա Շահընշահ (թա-
գաւորներու թագաւոր) էլ ասուեցաւ։

Հ. Աբաս եղբօրը տեղը յաջորդելով ի՞նչ
կերպով կառավարեց աղդը։

Պ. Աթոռը Պարս դրաւ՝ իւր իմաստու-
թեամբը թշնամիներին յաղթեց ու խա-
ղաղութիւն արաւ, որով Հայաստան
սկսաւ ծաղկիլ։

Հ. Աբաս ի՞նչ երևելի պատերազմ արած
ունի։

Պ. Որ Պարսից և Աֆխազաց թագաւորը
պատերազմի դուս եկաւ Աբասին ընդդէմ,
և ծաղը անելով պատգամ յուղարկեց
որ Պարսին մայր եկեղեցին ինքն պիտի
գայ օրհնէ Պարսից ծիսով։ Աբաս առաջը
դուրս գալով յաղթեց և բռնեց, և
Պարս բերելով ցոյց տուաւ այն եկեղե-
ցին, որ կուզէր օրհնել, ու վերջը աչ-
քերը կուրացրեց։

Հ. Աբաս ո՞րչափ ժամանակ թագաւո-
րեց։

Պ. «Բանը չորս տարի խնէքով և խոստովանութեամբ (953)։

— ⊹⊹ —

ԴԱՍ ԺԸ.

Աշխարհաբնեաց կամ Պատարագամատոյցի խորհրդին ընդարձակութիւնը։

Աղոթք ողորմած և Սրբոյ Հոգի։

Հ. Ո՞վ եղև Աշխարհաբնեաց առաջին թագաւորը.

Պ. Դաւիթ առաջին Սմբատին քեռորդին ինչպէս վերևը ասացինք։

Հ. Դաւթին ո՞յք յաջորդեցին.

Պ. Իւր որդի Աշոտ Գեղեցիկ 16 տարի. Գեղեցիկից յետոյ փոքր եղբայրը Համազասպ Աբուսահլ, որ նորան յաջորդեցին իւր երեք տղայքը Աշոտ, Գուրգէն և Սենեքերիմ, այս Սենեքերիմը Սկիւթացւոց բռնութիւններից ազատվելու համար՝ ինքը Սեպասիոյ

գաւառք առաւ 'ի Յունաց և Վասպուրականը տուաւ նորանց 1021-ին։ Այն տեղ նրան յաջորդեց իւր որդին Դաւիթ, և նրան էլ յաջորդեցին Աշոտ և Աբուսահլ, որք երբ որ մեռան 1080-ին, բոլորովին վերջացաւ այն թագաւորութիւնն էլ։

Զ. Դերենիկ Աշոտին թագաւորութեան ժամանակը ի՞նչ յիշատակի արժանի գործ պատահեց։

Ղ. Ապլխարիպ Հաւնունին զ՚Դերենիկը մատնիլը և 'ի վերջոյ արած քաջութիւնը։

Հ. Ապլխարիպ ի՞նչու համար Դերենիկը մատնեց թշնամեաց ձեռքը։

Ղ. Վասն զի Դերենիկ ուրիշներին դրդռութեամբը Ապլխարիպը սպարապետութեան պաշտօնից քցել էր։ Ապլխարիպն էլ այս բանիս վրէժը առնելոյ համար Հերակ և Օարևանդ գաւառներին իշխաններին պատերազմի յորդորելով նորանց ձեռքը մատնեց։

Է. Ասլանարիպ իւր արածին վերայ ի՞նչ-
պէս զղջաց.

Զ. Ամենահայրները և եպիսկոպոսները լսե-
լով այս բանս նզովեցին Ասլանարիպը.
ինքն զղջաց իւր յանցանքին վերայ. մի
օր երբ որ իշխանները մի դաշտի մէջ
Դերենիկը կ'ջարջարէին հետը խաղալով.
Ասլանարիպ խմցաւ ու այն տեղերը
դարան մտաւ և իշխաններից ոլոր ապա-
նեց, որը փախցրեց իր քաղաքը, որք
իսկոյն քաղաքին դռները փակեցին.
Ասլանարիպ այսպէս կատաղութեամբ զար-
կեց որ սուրը երկաթեայ դրան մէջ խը-
րուեց մնաց. և այս կերպով ազատեց
Դերենիկը (940)։

Ը. Աբասին մեռնելից հետոյ այոց վիճակը
ի՞նչպէս եղև.

Զ. Եպիսկոպոսները չմիաբանելուն համար
տասը տարի առանց թագաւորի մնաց
այոստան. թէպէտև Աշոտ Աբասին
որդին շատ զօրք ժողոված խելքով ազ-
գը կ'կառավարէր և թշնամիներին սիրաք

վախ քցեց իւր քաջութիւններով (952)։

Հ. Աշոտ Գ. ի՞նչպէս թագաւորեց։

Պ. Տեսանելով նախարարները Աշոտին կատարելութիւնները՝ թագաւոր օծեցին նրան, սա էլ իւր ողորմածութեան համար Աշոտ ողորմած ասուեց։

Հ. Աշոտին ժամանակը ուրիշ ի՞նչ թագաւոր էլ կար Հայաստան։

Պ. Սուշեղ Աշոտին եղբայրը զլուխ քաշելով Կարսի մէջ թագաւորեց։ Աշոտ խռովութիւն չլինելոյ համար ձայն չհանեց։ ուստի թագաւորական այն ճիւղը էլ մի փոքր ժամանակ զնաց և վերջը Յունաց ձեռքը անցաւ։

Հ. Աշոտին յիշատակի արժանի գործողութիւնները ո՞յք են։

Պ։ Որան խաղաղասէր խելօքութիւնն և բարեպաշտութիւնը, որոյ նմանը չեղև Բաղրատունեաց մէջ։ Սա Աստուծոյ մայրաքաղաք շինելով զարդարեց։

Հ. Աշոտ ի՞նչ արդիւնք արաւ, որ Ամիրայիներից պատիւներ ընդունեց։

Պ. Համոուն Տաճիկներին սպարապետը ՌՇ պատամբվելով Ամիրապետից՝ Հայաստանի վերայ վազեց, Ղշոտ առաջը դուրս գալով նորան սպանեց։

Հ. Ղշոտին ո՞վ յաջորդեց.

Պ. Ռսանը վեց տարի զարմանալի կերպով կառավարելից յետոյ. սրբութեամբ մեռաւ, իւրան յաջորդեց իւր անդրանիկ Սմբատը։

Հ. Սմբատ Բ. ի՞նչ տեսակ կառավարութիւն ունեցաւ.

Պ. Իւր հօրը նման խաղաղասէր և շինութիւնների հետևող եղև, և Տրդատ ճարտարապետին ձեռքովը շինել տուաւ Ընդի մայր եկեղեցին և ուրիշ շատ շինութիւններ։

Հ. Մինչև վերջը իւր բարեպաշտութեան մէջ ձեա՞ց.

Պ. Ոչ. սկսաւ վերջերը եկեղեցական օրէնաց հակառակ բաներ անել ու ասելի

լինել, և տասնը երկու տարի թագաւորելից յետոյ մեռաւ (988)։

ԴԱՍ ԺԹ։

Պատգէկ Ը. և Յովհաննէս Սմբատ։

Հ. Պատգիկ առաջին ի՞նչ կողմանէ անուանի եղև։

Պ. Թէ բարեպաշտութեամբ և թէ քաղաքաշինութեամբ Հայրատունեաց երևելի և գովելի թագաւորներից մէկը եղև, որ երեսուն տարի թագաւորելից յետոյ մեռաւ. սա լրացրուց Անի քաղաքին շէնքերը։

Հ. Առաջին Պատգիկին ո՞վ յաջորդեց։

Պ. Յովհաննէս Սմբատ, որ թէպէտև խելօք էր, բայց դործունեայ և աշխոյժ չլինելուն համար շատ չարիքներ հետևեց Հայաստանի. նա՛և Աշոտ եղբայրն էլ ապստամբվեցաւ իւրանից որ քաջ և գլուխը տաք երիտասարդ էր։

Հ. Յովհաննէս Աշուին հետ հաշտուե՞ց.

Պ. Աշուն Սենեքերիմ Ասասուրականի թագաւորից օգնութիւն առնելով եկաւ Ընին պաշարեց. Պետրոս Պաթուզիկոսը և Գորգի Ասրաց թագաւորը մէջ մտնելով հաշտեցրեց իրարու հետ։

Հ. Աշուն իւր խոստմանը մէջ հաստատուն մնա՞ց.

Պ. Օգնելով արած խոստմանը վերայ, հիւանդ ձևացաւ. երբ որ Սմբատ նրան տեսնելու եկաւ, այն տեղ որոգայթի մէջ բռնվեց ու սկսաւ աղաչել Աշուին որ կենացը խնայէ. Ապիրատ իշխանը բռնեց զՍմբատը ու ձևացրեց թէ մեռցնելու է՝տանի. բայց զնաց Ընի. և վերատին Սմբատը թագաւորացրեց և ինքը փախաւ զնաց։

Հ. Ի՞նչ պատճառաւ Յովհաննէս Սմբատ Ընին Յունաց Ասիլ Պայսեր խոստացաւ տալ։

Պ. Ասն զի իւր թագաւորութեանը չորրորդ տարին Սկիւթացիք Հայաստանի

վերայ վաղելով շատ վնասներ հասցրին։ ինքն էլ չկարելով դէմ դնել։ Վասիլ Պայսեր թղթով խոստացաւ որ իւր մեռնելից յետոյ Ընին Յունաց անցնի։ միայն թէ՝ Վասիլ օգնէ նրան Սկիւթացւոց ընդդէմ (1024)։

2. Սմբատին թղթով արած այս խոստմունքը ի՛նչ հետևանքներ ունեցաւ։

